№ 103 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9 **1895** ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9 № 103

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օրինակ վերցրէք. Սուլթանը իսլամի խալիֆան չէ. Վերջ պիտի լինի թէ ոչ. Հայոց հարցը և Եւրօպական մամուլը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մինթէ դուք. Դարձեալ «Новое Время»· Հարիւրամեակ. Նամակ Պետերբուրգից. Նամակ Ղուբայից. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Ամերիկայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Finis Armeniae.

ՕՐԻՆԱԿ ՎԵՐՑՐԷՔ

Մեր պարտքն ենք համարում շեշտել Վանի ամերիկական օրիորդաց ուսումնարանի տեսչուհի դօկտօր Կիմբըլի նամակի վրա, որը տպագրվեց „Մշակի“ անցեալ համարում:

Այդ նամակը, որի մէջ նկարագրված է մի օտարերկրացի կնոջ գործունէութիւնը, ուշադրութեան արժանի է՝ նախ այն կողմից, որ դօկտօր կինը չը դիմեց օգնութեան այն սովորական միջոցին, որ մուրացկանութիւն է յիշեցնում, և փոխանակ աղքատներին փող բաժանելու, նա սկսեց նրանց գործ տալ, աշխատանք տալ, որ օգնութեան ամենալաւ և ամենապնիւ ձևն է:

Անչափ ցաւելով, որ մենք անկարող ենք „Մշակի“ մէջ, ինչպէս անցեալ անգամ ասեցինք, հանգանակութիւն բանալ այդ համակրելի ձեռնարկութեան օգնելու նպատակով, մենք անկարող ենք զսպել մեզ և չը նախատել Վանի հայոց հոգևորականութիւնը, որ ձեռքերը ծալած նստել է, և նոյն իսկ չէ կարմրում, տեսնելով, թէ ինչպէս մի օտարերկրացի կին աւելի է անում, քան մի ահագին քաղաքի ամբողջ հոգևորականութիւնը:

Եթէ Վանի փոքրաթիւ, ինտելիգէնտ, ամբոխից բարձր կանգնած աշխարհական անձինք անկարող են, քաղաքական այժմեան տագնապի ժամանակ՝ որ տիրում է Հայաստանում, գլուխ անցնել և ժողովրդին օգնութեան հասնել, այդ դեռ չէ նշանակում, որ Վանի հայ հոգևորականութեանն էլ արգելված է հասարակ, քրիստոնէական օգնութիւն հասցնել չքաւորներին, աղքատներին և եկւոր սովեալներին: Վանի դրութիւնը՝ Սասունի դրութիւնը չէ, և այդ քաղաքի հոգևորականութիւնը համարձակ կարող է իրան նուիրել բուն քրիստոնէական, մարդասիրական մի գործի, մի կողմից միջոցներ ձեռք բերելով, և միւս կողմից՝ օգնելով բազմաթիւ թշուառներին:

Բայց չէ. մեր սեաղլուխները, ինչպէս ամեն տեղ, այնպէս և Վանում, սովոր են միայն կռփել ժողովուրդը, և թաղումից ու պսակից դուրս ուրիշ ոչ մի բանի ընդունակ չեն, ոչ մի բանի մասին գաղափար չունեն:

Ահա այդ ագէտ, անշնորք, անպէտք, միմիայն ժողովրդին կռփելու վարժված հոգևորականութեան շնորհովն է, որ այս րօպէիս Հայաստանի մէջ ամեն մի լաւ գործ, ամեն մի բարի ձեռնարկութիւն և ամեն մի մարդասիրական հրաւէր՝ պատկանում է կամ օտարներին, կամ աշխարհականներին, բայց ոչ երբէք մեր հոգևորականներին:

ՍՈՒԼԹԱՆԸ ԻՍԼԱՄԻ ԽԱԼԻՖԱՆ ՉԷ

„Մշակի“ անցեալ համարներից մէկի մէջ տպված էր, որ Թիւրքիան սպառնում է ոտի կանգնեցնել Հնդկաստանի մահմէտականներին, եթէ Մեծ-Բրիտանիան շարունակի սաիպղական միջոցներ ձեռք առնել Թիւրքաց սուլթանի դէմ, իբրև մահմէտական աշխարհի ներկայացուցչի դէմ: Մենք կաշխատենք ապացուցանել, որ դա մի դատարկ սպառնալիք է Թիւրքիայի կողմից, և ոչինչ վտանգ չէ ներկայացնում Անգլիայի համար:

Թիւրքաց սուլթանը ամենևին իսլամի կամ մահմէտական կրօնի ներկայացուցիչը չէ, հետևաբար և նրա դէմ ձեռք առնված որ և է միջոց չէ կարող նկատվել իբրև բռնութիւն կամ վիրաւորանք ընդհանուր իսլամի ներկայացուցչի դէմ:

Ով աւելի մօտիկ ծանօթ է իսլամի կրօնի կազմակերպութեան, նրա կանոնական իրաւունքի, նրա դատանաբանութեան և, վերջապէս, նրա պատմութեան հետ, նա շատ լաւ գիտէ, որ Թիւրքաց սուլթանը երբէք նկատված չէ եղել իբրև իսլամ ժողովրդի խալիֆան, ներկայացուցիչը, այն է՝ իբրև մեծ մարգարէի օրինաւոր յաջորդը:

Թիւրքաց սուլթանը բուն մահմէտականների, մանաւանդ մահմէտական հոգևորականութեան աչքում նկատված է նոյնպիսի ուղղափառ, ինչպէս և պարսից Շահը:

Աշխատենք ապացուցանել մեր այս տեսիսը:—Ինչպէս յայտնի է, ամբողջ իսլամ աշխարհը, այսինքն մահմէտական կրօնը դաւանող բոլոր ազգերը, բաժանվում են երկու հերձուածի. մի մասը պատկանում է սիւննի, միւս մասը շիա դաւանութեան: Այդ երկու հերձուածները ծագեցին Մուհամէդի մահից յետոյ, երբ նրանից, իբրև խալիֆա, տեղապահ նշանակված Ալիի ձեռքից խալիֆայութիւնը յափշտակեցին ուրիշները, մանաւանդ Օմարը, և այդ յափշտակութիւնը առաջ բերեց ներքին մեծ պատերազմ: Ահա այդ կռուի պատճառով ամբողջ մահմէտական աշխարհը բաժանված է երկու մեծ, միմեանց դէմ ոխերիմ թշնամութեամբ և զարհուրելի ատելութեամբ լցված բանակների—սիւննիների և շիաների: Շիաները Ալիի և նրա որդոց կուսակիցներն ու պաշտողներն են, իսկ սիւննիները — նրանից խալիֆայութիւնը յափշտակող Օմարի, Օսմանի և Աբուբէքիրի: Շիաները ընդունում են իբրև անհերքելի պատմական ճշմարտութիւն, որ Մուհամմէդ մարգարէն իր խալիֆա, տեղապահ էր նշանակել իր փեսայ Ալիին, բայց նրա մահից յետոյ հակառակորդները յափշտակեցին նրա իրաւունքը և ոտնակոխ արին մեծ մարգարէի կտակը և պատգամը, ուստի այդ հակառակորդները միայն յափշտակիչներ են և կեղծ խալիֆաներ: Դրա հակառակ, սիւննիները Ալիի և նրա որդիներին են համարում ինքնակոչ և կեղծ խալիֆաներ:

Եւ այդ թշնամութիւնը, այդ ատելութիւնը տիրում է երկու դաւանութեան պատկանող ազգերի մէջ դարերից ի վեր և կազմում է նրանց հաւատի, դաւանութեան հանգանակի մի մասը:

Պարզ է, որ շիա-մահմէտական ժողովուրդները երբէք չեն կարող ընդունել մի սիւննի թագաւորի, իբրև մեծ մարգարէի տեղապահ և յաջորդ, և նրանց աչքում այդ տեսակ դեր ստանձնող սուլթանները միշտ նկատվել են և կը նկատվեն իբրև յափշտակողներ և կեղծ ներկայացուցիչներ:

Դալով սիւննի մահմէտական ազգերին, սրանք ևս, ինչպէս ապացուցված է բազմաթիւ փաստերով, երբէք չեն համարել և չեն հրատարակել Թիւրքաց սուլթանին իբրև խալիֆա, իբրև մեծ մարգարէի յաջորդ, որովհետև իսլամ դաւանաբանութեան համաձայն, մարգարէի յաջորդ նա կարող է համարվել, ով անընդհատ կերպով առաջ է եկել բուն խալիֆաներից: Յայտնի է, որ բուն խալիֆաները միայն „արաբական“ կոչված խալիֆաներն էին, որոնց իշխանութիւնը վերջացաւ 1258 թվին, իսկ օսմանեան կամ Թիւրք սուլթանները երևան եկան միայն 14-րդ դարում և այն ևս պատկանելով բոլորովին ուրիշ ցեղին և դասակարգին: Այդ սուլթաններից մի քանիսը, այն ևս շատ վերջերում, հիմն բռնելով այն հանգամանքը, որ տիրապետում են Արաբիային, այն երկրին, որտեղ ծնվեց, քարոզեց և մեռաւ Մուհամմէդը, սկսեցին սեփականել իրանց խալիֆա տիտղոսը, բայց նրանց այդ յափշտակութեան դէմ միշտ բողոքեցին Մէդինայի գլխաւոր շէրիֆները, շէյխերը և մուշտահիդները, և սիւննի-մահմէտական ժողովուրդի աչքում եթէ կայ մինը, որ կարող է համարվել իբրև խալիֆա, մարգարէի յաջորդ, այդ Մէդինայի մեծ-շէրիֆն է:

Ուրեմն, քանի որ ոչ շիա, ոչ սիւննի մահմէտականների աչքում Թիւրքաց սուլթանը չէ նկատվում իբրև իսլամի բուն ներկայացուցիչ, իբրև խալիֆա, քանի որ բռնութիւն կամ վիրաւորանք ընդհանուր իսլամի ներկայացուցչի դէմ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

FINIS ARMENIAE

Յօդուած Էմիլ Դիլլօնի

II

Երբ որ յայտնի եղաւ, թէ ես չուտով թողնելու եմ Հայաստանը և վերադառնալու եմ Եւրօպա, բազմաթիւ գիւղացիք, քահանաներ, բանուորներ, արհեստաւորներ և այլն եկան ինձ տեսնելու և խնդրելու, որպէս զի ես ասեմ «աղնիւ և մեծահոգի Անգլիայի ժողովրդին», թէ որքան կարևոր է, որ օգնութիւնը տրվի առանց յետաձգելու: Այդ թշուառներից շատերը, որոնց վիճակը իսկապէս աւելի վատ է, քան տաժանակիրներինը, ինձ հաւատացնում էին, որ իրանք շուտով պատրաստ են գաղթելու: Քանի դեռ եւրօպական յանձնաժողովը գործում էր, նրանք համբերում էին այն անմիտ յուսով, թէ դա վախճանի սկիզբն է. բայց այժմ այլ ևս նրանք չեն կարող համբերել և պիտի հեռանան: Մէկը ունէր մի եղբայր, որը սպանված էր, բանտում կրած ծանր չարչարանքներից. միւսի կինը մեռել էր երկիւղից, երբ քիւրդերը հրացան էին արձակել նրա վրա, գնդակը նրան չէր կպել, բայց սպանել էր նրա որդուն. երրորդի աղջկան բռնաբարել են, ստիպել են հարեմը մտնել և ընդունել մահմէտականութիւն: Միւսները, որոնք վախենում էին, բայց դեռ չէին փորձել ամենավատը, ինչ որ կարող է պատճառել քիւրդը կամ Թիւրքը, լուրջ կերպով հաւատացնում էին ինձ, թէ ընդունելու են իսլամը: Նրանց Աստուածը կարող է և ճշմարիտ Աստուած լինել, բայց բոլոր նշաններից երևում է, որ այն Աստուածը, որի մարգարէն Մահմեդն է, մարդկերանց մասին հոգացող նախախնամութիւնն է, և նա էլ հոգում է միմիայն մահմէտականների մասին: Կային ուրիշներ, որոնք մտադիր էին գաղթելու, բայց յանկարծ ցիրուցան եղան՝ նախ քան կարողանային իրագործել իրանց մտադրութիւնը. երկուսը նրանցից բանտարկված են անորոշ ժամանակով, երկուսը հարեմներում են, մէկը փախցրած է, յայտնի չէ ինչպէս, մէկը Ռուսաստանումն է,—ուրեմն մի աքսորական, որը երբէք չէ կարող վերադառնալ միմիայն այն պատճառով, որ անցել է սահմանը: Ես գիտէի, որ այս տեղեկութիւնները շատ հաւանական են, որովհետև նրանք բոլորովին համաձայն էին իմ սեփական տեսածներին, և ես լաւ համոզված էի, որ եթէ էլի մի քանի ամիս Թիւրքերը այս եղանակով գործեն՝ երկիրը հայերից կը դատարկվի:

Բայց քանի որ այդ իրողութիւնը ամենքին յայտնի չէ՝ աւելորդ չի լինի դնել ընթերցողների առաջ մի քանի փաստեր՝ նրանց գաղափար տալու համար այն պատճառների մասին, որոնք ստիպում են քրիստոնեաներին գաղթել՝ թողնելով իրանց տունը և օջախը, լաւ գիտենալով, որ իրանց սպասում է չքաւորութիւն, թշուառութիւն, գուցէ և մահ: Այս պատճառները այնքան միօրինակ են, որ բաւական է մի դէպք՝ ընդհանուրի մասին գաղափար կազմելու համար: Ես գրած ունեմ հարիւրաւոր ընտանիքների մեծերի ցուցմունքները, որոնք խզել էին այն կապերը, որոնք կապում էին նրանց տան և օջախի հետ, ազգականների և բարեկամների հետ, և թէպէտ այդ վկայողները եկել էին տաս և տասն երկու օրվայ ճանապարհով միմեանցից հեռու գտնվող տեղերից՝ բայց բոլոր պատմածների էական մասը մի և նոյնն էր: Մի քանի օրինակներ կարող են հետաքրքիր և խրատական լինել:

Յակոբ Տէր-Մարտիրոսեանը, այն հարցին, թէ ինչու նա չը կարողացաւ մնալ իր հայրենի գիւղում՝ Թորթանում (Հասան-Կալէի սանջակ), պատասխանեց. «Բանն այն է, որ մեզ չէին թոյլ տալիս ոչինչ սեփականութիւն ունենալ: Մենք աշխատում էինք, վարում էինք, արածացնում էինք, բայց արդիւնքը վերցնում էին մահմէտականները, որոնք ոչ մի աշխատանք չեն գործ դրել, ոչ մի դրամ չեն վճարել և ոչ մի իրաւունք չունեն նոյն իսկ մի թզաչափ հողի վրա: Եւ նրանք վարվում էին քրիստոնեաների հետ նոյնպէս, ինչպէս և նրանց ցորենի և տաւարի հետ: Օրինակ, համիդիէ քիւրդերը (համիդիէն—սուլթանի սիրած հեծելազօրքն է) մի երեկոյ մտան իմ բարեկամ Թումարէհի տունը, և ընթրիքից յետոյ պատուիրեցին, որ ընտանիքի երիտասարդ կանայքը բերեն իրանց մօտ, և անմիջապէս բռնաբարեցին նրանց: Իմ համագիւղացիներից մի ուրիշը, Գալուստ անունով, զրկվեց իր յիսուն ոչխարներից: Նոյն գիւղի բնակիչ Գէորգը զրկվեց իր չորս զոյգ եզներից, և այլն: Սրանք միայն օրինակներ են, գործուածքի թելերն են միայն: Մենք չենք կարող պաշտպանել մեզ, մեր գոյքը, մեր ընտանիքը, որովհետև մեզ արգելված է զէնք կրել կամ ունենալ. մենք չենք կարող նոյնպէս յուսալ արդարութեան վրա, որովհետև ամեն մի պաշտօնեայ գիտէ, որ կենտրօնական կառավարութիւնը ցանկանում է, որ արդարութիւն չը տրվի քրիստոնեաներին: Ի՞նչ է մնում մեզ անել ուրեմն, եթէ ոչ գաղթել: Ոչինչ, ոչինչ մեր սեփական: Մի օր ես բանում էի դաշտում մի քանի հարևաններիս հետ, երբ քիւրդերը եկան և յարձակվեցին մեզ վրա: Մենք բոլորովին ոչինչ չունէինք, որ նրանց դրաւէր. բայց դարձեալ դատարկաձեռն չը հեռանալու համար՝ նրանք հանեցին մեր ոտնամանները և տարան իրանց հետ»:

Մի ուրիշ մարդ պատմում է իր կարճ պատմութիւնը այսպէս. «Իմ անունս Սարգիս Սարգսեանց է: Ես տեղափոխվում եմ Ռուսաստան՝ իմ երեք հոգուց բաղկացած ընտանիքով: Ես միայն 26 տարեկան եմ: Մենք, ինչպէս և շատ ուրիշները մեր գիւղից, թողնում ենք Թեզուտը (Բուլանխի սանջակ), որովհետև կեանքը այդտեղ անտանելի է: Մեր բոլոր ունեցածը վերցնում են բռնի կերպով, և օրէնքը բռնի ոյժ գործ դնող քիւրդի և Թիւրքի կողմն է: Անցեալ տարի մեր գիւղի վրա յարձակվեց Շեյխ Քիամիլը իր ընկերներով: Նրանք տարան մեր բոլոր ոչխարները: Իմ հայրս և իմ ընկեր Ղազարը աշխատեցին համոզել, որ ձեռք քաշեն իրանցից, բայց նրանք ծեծեցին հօրս և սպանեցին Ղազարին:

Հնդկաստանի մահմեդականները պահանում են այդ երկու դաւանութեան, հետեւաբար միանգամայն անտեղի է այն վախը և կասկածը, թէ այդ մահմեդականները Թիւրքաց սուլթանի դէմ ուղղած որ և է ցոյց՝ կարող են համարել իբրև վիրաւորանք և հալածանք իրանց կրօնին:

Շատ ցանկալի կը լինէր, որ մեր երկրի իրաւաբան-մահմեդականները իրանց կարծիքը յայտնէին ներկայ հարցի մասին:

ՎԵՐՋ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԹԷ ՈՉ

Անգլիական „Daily News" լրագրի թղթակիցը, որ գտնվում է Փոքր Ասիայում, հեռագրել է Կարսից կամախի դէպքերի մանրամասնութիւնները, որոնք նման են „Մշակի" մէջ հաղորդածին:

Թղթակիցը սկսում է իր հեռագիրը հետեւեալ խօսքերով: „Լորդ Սալսբիւրին հաւաստիացնում էր, թէ այլ ևս երկիւղ չը կայ, որ անցեալ տարվայ սարսափելի դէպքերը կրկնվեն. սակայն այդ յոյսը չարդարացաւ: Ներկայումս Երզնկայի կողմերում տեղի ունեն տեսարաններ, որոնք կարող են մրցել Սասունի կոտորածի հետ: Գլխաւոր դրծողը դարձեալ Զեքի փաշան է: Անկասկած, ներկայ դէպքումն էլ Թիւրքերը կը ժխտեն ամեն բան կամ, իրանց արդարացնելու համար, կը հնարեն մի պատմութիւն հայկական յեղափոխութեան մասին": Այնուհետև թղթակիցը, պատմելով հայ ընթերցողներին յայտնի դէպքերը, աւելացնում է՝

„Երզնկայի հայերը սարսափի մէջ են. նրանք դիմեցին Էրզրումի անգլիական, ֆրանսիական և ռուսական հիւպատոսներին, խնդրելով պաշտպանութիւն տեղական պաշտօնեաների և զօրքերի դէմ: Գրգռում և շփոթութիւնը ընդհանուր է: Նոյն իսկ բարձր դասակարգի Թիւրքերը յուզվել են սաստիկ, և այն կարծիքն են յայտնում, որ այս անգամ Զեքին զլուխը կորցրել է: Հայերը բնականաբար կապում են այս նոր անգթութիւնները իրանց Թշնամի Շաքիր փաշայի հանդէս գալու հետ, որ այժմ Ճանապարհի վրա է դէպի Երզնկա:"

Այդ թղթակցութեան առիթով „Daily News" լրագիրը գրել է մի ընդարձակ և խիստ առաջնորդող, որը, ի միջի այլոց, ասում է՝

„Հայաստանում սպասելի է մի անխուսափելի աղէտ: Երկու բան հաստատ է և անկասկած.—կամ Թիւրքական վարչութիւնը պէտք է դադարի, կամ սուլթանի քրիստոնեայ հպատակները պէտք է ջնջվեն: Այսօրվայ մեր հեռագիրը Հայաստանից ցոյց է տալիս, որ անհրաժեշտ է Եւրոպայի միջամտութիւնը, և դրա յետաձգելը՝ վտանգաւոր է: Երեք պետութիւնները պէտք է զգան այն մեծ պատասխանատուութիւնը, որ նրանք վերցրել են իրանց վրա, շնորհիւ իրանց միջամտութեան:

„Երբ առաջին մինիստր լորդ Սալսբիւրի, լորդերի պալատում, օգոստոսի 12-ին, խօսեց, նա այն հաւատը արտայայտեց, որ Հայաստանում դադարել են զազանութիւնները: Նրա յոյսերը չափազանց վարդագոյն էին: Բայց հէնց այն օրը, երբ նա խօսում էր, տեղի ունեցաւ այն ընդհարումը, որ առաջ բերեց այնպիսի դժոխային և զազրելի խստութիւններ:

„Մի քանի անմիտ անձինք այն միտքը յայտնեցին, որ վտանգաւոր է մահմեդականութեան դէմ խաչակիրների արշաւանք անել: Թող այդպէս ասողները սպասեն՝ մինչև այդ տեսակ արշաւանք կը պատրաստվի:

„Գլադստոն՝ Զեստերում արտասանած իր մեծ ճառի մէջ ասաց, որ եթէ քրիստոնեաները լինէին ճնշողները, միջամտութեան պարտաւորութիւնը տասն անգամ աւելի կը լինէր, քան այժմ կայ: Բերլինի դաշնագիրը և անգլօ-Թիւրքական պայմանագրութիւնը կազմողները ո՛չ կրօնական ֆանատիկոսներ են եղել և ոչ էլ մոլեռանդ Թիւրքատեացներ:

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

I Վճռական քայլեր

Հայաստանում տեղի ունեցող անցքերի առիթով «Daily News» լրագիրը, իր առաջնորդող յօդուածի մէջ, ասում է հետեւեալը.

«Հասաւ այն վայրկեանը, երբ պետութիւնների եռանդոտ գործողութիւնները անպայման անհրաժեշտ են դառնում: Սուլթանը և նրա խորհրդատուները դեռ ևս յոյս ունեն, թէ մի որ և է դէպք կը պատահի Եւրոպայում, որը պետութիւնների ուշադրութիւնը կը գրաւի և մոռացնել կը տայ Հայաստանի դրութիւնը: Բայց լորդ Սալսբիւրին արդէն ասեց իր խօսքը, նա «այրեց իր նաւերը:» Ֆրանսիական կառավարութիւնը, անկասկած, չէր համակրի Սալսբիւրիի վարմունքին, եթէ կառավարողներս քաղաքագիտական և արդարացի չը համարէր այդ վարմունքը: Ինչ որ վերաբերում է Ռուսաստանին, ի հարկէ, նա կարող էր յանձն առնել հայոց հարցի լուծումը, բայց նա այդ չէ կարող անել, առանց արիւն թափելու, և դրանից կարելի է միայն խուսափել երեք պետութիւնների միաբան գործողութեամբ:»

II Քաղաքական հարցեր

«Բէյտերի» գործակալութիւնը հաղորդում է, որ Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը և Ֆրանսիան մտադիր չեն զբաղվել եգիպտական խնդրով, ինչպէս չատերը ենթադրում էին: Երեք պետութիւնները չատ զբաղված են եւրօպական և հայկական խնդիրներով, որոնք պէտք է նախ և առաջ լուծվեն բաւարար կերպով:

III Վերահսկողական ճանաչողով

«Kölnische Zeitung» հաղորդում է, որ Ռուսաստանը և Ֆրանսիան դեռ պաշտօնապէս չեն միացել լորդ Սալսբիւրիի այն առաջարկին, թէ երեքպետեան դաշնակցութիւնը պէտք է մասնակից լինի վերահսկող յանձնաժողովի գործի մէջ՝ հայկական բէֆօրմների վերաբերմամբ, այլ նրանք խոստացել են այդ առաջարկին անելու: Սուլթանը ընդդիմանում է այդ առաջարկին ծայրայեղ յամառութեամբ: Նա, ասում են, նկատել է, որ աւելի չուտ ձեռք կը քաշի Եւրոպայի իր նահանգներից, քան թոյլ կը տայ հարուածել իր անկախութիւնը Ասիայում:

IV Նոր սպանութիւն

Բէյտերի գործակալութիւնը հեռագրում է Կ. Պոլսից, սեպտեմբերի 8-ից հետեւեալը.

«Սերբատիայից նոր ստացված տեղեկութիւնների համաձայն, Թոքաթի պետական պրոկուրորը, որ մի մուսուլման է, Սեբաստիա գնալու ժամանակ, ենթարկվել է յարձակմանքի և սպանվել, ինչպէս ենթադրում են, հայ աւազակների կողմից:»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻԹԷ ԴՈՒՐ

«Մշակի» № 92-ի մէջ տպված էր՝

«Հարկաւոր ենք համարում հաղորդել ի գիտութիւն հայոց հասարակութեան, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, յարգելով ամենայն հայոց Կաթողիկոսի ցանկութիւնը, Թիֆլիսի հայոց առաջնորդի խնդիրքը, և դպրոցի նախկին հոգաբարձութեան տենչանքը, որոշել է այս տարի էլ անփոփոխ պահել ուսուցչական ամբողջ խումբը»:

Ի՞նչ է դա:—Կատակ, իրօնիա:

Եւ ճշմարիտ: Մի՛թէ առանց կատակի, առանց իրօնիայի կարելի է ասել, որ Ներսիսեան դպրոցի այժմեան հոգաբարձութիւնը յարգեց... նախկին հոգաբարձութեան տենչանքը, երբ այժմեան և նախկին հոգաբարձուները նոյնքան են միմեանց յարգում, որքան հրեշտակները սատանաներին...

Սակայն գտնվեցին մարդիկ, որոնք չը հասկացան այդ դառն հեգնութիւնը: Եւ ահա, ինչպէս լսում ենք, Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան վերջին նիստում, նախագահը հարց դրեց՝ —ճիշդ է «Մշակի» լուրը, թէ ոչ:

Երկար մտածեցին, խօսեցին, համոզվեցին, որ կատակը ճիշդ է, բայց և այնպէս վճռեցին՝ որ լուրը ճիշդ չէ:

Իրաւունք ունի հոգաբարձութիւնը: Լուրը ճիշդ չէ: Եւ մենք միտք էլ չենք ունեցել սոսկ լուր գրելու, այլ միայն մի դառն հեգնութիւն, մի իրօնիա, «ձեռքերը կապած հոգաբարձութեան» վրա:

Ուրեմն, եթէ «հոգաբարձութիւնը որոշել է անփոփոխ պահել ուսուցչական ամբողջ խումբը», դա ոչ Կաթողիկոսի ցանկութիւնն է, ոչ առաջնորդի խնդիրքը և ոչ էլ նախկին հոգաբարձութեան տենչանքը: Այդպէս վճռեց հոգաբարձութիւնը իր վերջին նիստում, յայտարարելով՝ որ «Մշակի» լուրը ճիշդ չէ:

Հետեւաբար՝ այժմեան հոգաբարձութիւնը իր ազատ կամքով է որոշել «անփոփոխ պահել ուսուցչական ամբողջ խումբը»:

Այնպէս է, յարգելի հոգաբարձութիւն:

Եթէ այդպէս չէ՝ այն ժամանակ բարեհաճեցէք պարզել, ինչումն է գաղտնիքը: Ո՞վ պահեց ուսուցչական խումբը: Մի՛թէ դուք...

*

ԴԱՐՁԵԱԼ «НОВОЕ ВРЕМЯ»

Մարգարէ լինել դժուար բան չէ—«Новое Время» լրագրի վերաբերութեամբ: Ինչ և նախագուշակէք նրա բռնած դիրքի մասին մի որ և է հարցի մէջ, որը պահանջում է աւելի քան մի յօդուած—բոլորն էլ կիրագործվի:

Այս անգամ (տես սեպտ. 1-ի համարը) հրապարակ է դուրս եկել մի ազնիւ պարոն, Камскій կեղծ անունով, և թափում է զմայլված ընթերցողի առաջ իր ամբողջ գիտութիւնը հայ ցեղի մասին—ի հարկէ արդիւնք խոր և խղճմտալի ուսումնասիրութեան:

Լսեցէք: Հայերը ընդհանուր հակակրութեան առարկայ են թէ Կովկասում թէ Թիւրքիայում. նրանք չահասէր են և այս պատճառով հարուստ են: Հայ ամբոխը չատ կոպիտ և տգէտ է. նա աչքի ընկնող անկուլտուրական է. հայը ընդունակ չէ ոչ կրքի, ոչ առիւնի, ոչ էլ ամենահասարակ ոգևորութեան. հայը անպայման այլասերվող ցեղի բոլոր յատկանիշներն ունի... «Հայերը խիտ ազգաբնակութիւն են կազմում, ներշնչված են իրանց ինքնուրոյնութիւն պահպանելու ձգտումով:»

Ահա մի ամփոփ նկարագիր հայի ընդունակութիւնների, ձգտումների: Այդ կարդալուց յետոյ, ով այնքան անընդունակ կը գտնվի ամենաճիշդ հայեացք կազմելու հայոց ազգի մասին: Այսպէս չէ:

Ուշադրութեան արժանի է, որ այս բոլոր կարծիքներից և ոչ մէկը առանց ապացոյցի չէ թողած: Անընդունակութեան ապացոյց չէ, որ չատ

կարճ ժամանակից յետոյ Քիամիլը նորից եկաւ, և այս անգամ նա գրաւեց մեր արօտատեղերը: Մենք գանգատվեցինք տեղական իշխանութիւններին, բայց նրանք ստախօս անուանեցին և հայհոյեցին մեզ: Այն ժամանակ մենք վճռեցինք չտալով թողնել մեր երկիրը: Ես դեռ մի քիչ խոտ էի թողել, բայց Գօլոն, Ասլանի որդին, եկաւ, կրակ տուեց, և մոխիր դարձրեց: Այն ժամանակ մենք եկանք Հաչիմ բէյի մօտ՝ Գօպ գիւղը գանգատվելու, բայց Հաչիմ բէյը ինձ ստախօս անուանեց և ասեց, որ մեղք է մեղադրանքներ բարդել ճշմարիտ հաւատացեալների վրա և ինձ պատժելու համար, հրամայեց բանտարկել ինձ և ծեծել: Այս հրամանը կատարվեց: Երբ որ ես բանտումն էի, Ասլանի երկու միւս որդիքը, Իսօ և Պատօ, եկել են իմ տունը և գողացել իմ ցորենը: Այդ իմ վերջին ունեցածն էր, որ ես, գողանալուց ապահովելու համար, հողի տակ էի թաղել: Երբ որ ինձ արձակեցին, ես իմ ընտանիքի հետ եկայ ռուսաց սահմանը: Քիւրդերը մեզ լրտեսում էին, արգելում էին մեր ճանապարհը, խլում էին մեզանից մեր դրամը, մեր նոյն իսկ ամեն մի ցընցոտին, և հալածում էին մեզ: Վերջապէս մենք անցանք սահմանը: Ոչ ոք չէ կարող այժմ ապրել Թիւրքիայում, բացի մահմեդականներից: Նա անտանելի է քրիստոնեայ ազամարդկանց համար, նա դժոխք է քրիստոնեայ կանանց համար: Իմ բարեկամ Բիտօն ունէր մի աղջիկ՝ Մամօ անունով: Անմատո քիւրդը, Մօտգան ցեղից, եկաւ գիւղը, բռնի տարաւ նրան, անպատուեց և յետոյ ստիպեց մահմեդականութիւն ընդունել: Զը կայ արդարութիւն մեզ նմանների համար: Իմ համագիւղացի Կերբօն ունէր մի մատաղահաս աղջիկ, Սատաֆ անունով: Անցեալ ձմեռ մի քիւրդ՝ Ֆետօ անունով, թղուտ գիւղից, բռնաբարեց նրան և ստիպեց մահմեդականութիւն ընդունել: Ամէն տեղ մի և նոյնն է: Հայերը պէտք է բոլորովին անհետանան:»

Զաքար Տէր-Գրիգորեան Սոգիմելոից (Էրզրումի սանջակ) վկայում է հետեւեալը. «Ես քառասուն և հինգ տարեկան եմ, և իմ ընտանիքս բաղկացած է տասն և վեց անձերից: Մենք ստիպված էինք գաղթել, որովհետև Թիւրքերը և քիւրդերը մեզ հալածում և ասում էին, թէ կորէք այստեղից: Նրանք տարան մեր բոլոր ունեցածը, զրկելով մեզ մինչև անգամ մեր հաւատից, ուր որ այդ հնարաւոր էր: Մի տղայ կար այդտեղ, Աւետիս անունով, 16 տարեկան, որը ծառայ էր Սաչքի Մայօի տանը: Դրան ստիպեցին հրաժարվել իր կրօնից և դառնալ մահմեդական: Նա պէտք է կամ համաձայնվէր կամ մեռնէր, և դեռ ևս պատանի լինելով, նա վախեցաւ մահից: Մի քանի ամիս առաջ իմ հարեան և լաւ բարեկամ Օհանէսի աղջիկ Մարիամի վրա, աղբիւրից ջուր բերելու ժամանակ, յարձակվում են Ահմէդի որդի Խալիթը և նրա ընկերները: Նրանք բռնաբարում են նրան և փախցնում: Հինգ օր պահելուց յետոյ՝ յետ են ուղարկում նրան հիւանդացած: Նրանցից չատերը անասելի կեղտոտութիւններ են գցում մեր եկեղեցիները՝ պատուհաններից և տանիքից: Մենք տարանք եկեղեցու բանալիները Մուխտար Սելիմին, որպէսզի նա գայ և վկայի սրբապղծութիւնը, բայց նա չուզեց: Մենք աղաչեցինք նրան, բայց նա ասեց. «Եթէ մի անգամ էլ գաք ձեր գանգատներով, ես ձեր եկեղեցին կը դարձնեմ ոչխարների փարախ»: Քիւրդերը, լսելով որ մենք գանգատվել ենք իրանց դէմ՝ սաստիկ բարկացան, եկան մեզ մօտ և պահանջեցին, որ մեր երիտասարդ կանանց տանենք նրանց մօտ՝ գիշերելու համար: Վերջապէս նրանք սպանեցին իմ ընկեր Գրիգորին և վերադարձան իրանց տեղերը:»

Սաֆար Ղազարեան, քառասուն տարեկան, Խաղուրան գիւղից (Ալաչկերտի սանջակ) պատմեց հետեւեալը. «Իմ ընտանիքս բաղկացած է միայն չորս հոգուց: Մենք պէտք է թողնէինք մեր երկիրը, որովհետև այնտեղ ապրելը անկարելի էր: Ամենքն էլ կը թողնեն: Ուրիշները կարող են պատմել ձեզ իրանց կրած մասնաւոր նեղութիւնները: Ինձ հետ պատահածը հետեւեալն է: Մի օր Ալի-փաշան Թօփրակ-Կալէ կանչեց ինձ, որ գնամ և նրա համար մի պատ շինեմ: Ես ներողութիւն խնդրեցի, որ չեմ կարող գնալ՝ սաստիկ զբաղված լինելով այդ ժամանակ. բացի դրանից ես չատ լաւ գիտէի, որ իմ աշխատանքս առանց վարձատրութեան պիտի մնար, որովհետև մահմեդականները չեն վճարում հայերին՝ նրանց աշխատանքի համար: Ալի-փաշան բարկացաւ, որ ես չը թողեցի ամեն բան և չը կատարեցի նրա կամքը. նա եկաւ ինձ մօտ և ասաց. «Քո հայրը մեռել է, և դու իրաւունք չունես նրա ժառանգը լինելու: Այս պատճառով քո տունը և բոլոր ունեցածը այսուհետև իմն է: Դուրս գնա»: Եւ առանց մեծ դժուարութեան, նա բռնի տիրացաւ իմ տանը, իմ արտերին, իմ արօտատեղերին, իմ այգիներին և իմ հօտին, ինձ էլ տանիցը դուրս քշեց: Որովհետև արդարութիւն գտնել չէ կարելի, ինձ մնում էր միայն գաղթել: Այսպիսով ես հեռացայ իմ ընտանիքի հետ և իմ եղբայր Խաչօյի հետ, որին սաստիկ սիրում էի: Բայց Ալի-փաշան, իմանալով այս, եկաւ իր մարդկանցով և սպանեց իմ եղբայր Խաչօյին»:

Մի ուրիշ վկայ՝ Մարտիրոս Ենգոյեան՝ երեսուն և վեց տարեկան, ասաց. «Իմ ընտանիքս բաղկացած էր քսան և վեց անդամներից: Մենք ստիպվեցանք թողնել մեր հայրենիքը նոյն այն պատճառներով, որոնք դուրս են քշել հազարաւորներին և որոնք դուրս են քշելու մեր ամբողջ ժողովուրդը: Կը մնան միայն նրանք, որոնք սպանված են կամ բանտարկված: Մենք աշխատում ենք, և Թիւրքերը ու քիւրդերը տանում են բոլորը, ինչ որ մենք արդիւնաբերում ենք: Նրանք սովորաբար մեզ թոյլ էին տալիս ապրելու այն նպատակով միայն, որ մենք կարողանանք աշխատել նրանց համար: Այժմ նրանք ուզում են, որ մենք գնանք, և մեզ համար ոչինչ չեն թողնում, մինչև անգամ մեր պատիւը և կեանքը: Նոյն իսկ զինուորները, որ մեզ պաշտպանելու համար են՝ գալիս են և պահանջում՝ որ մեր երիտասարդ կանայքը պարեն նրանց առաջ, իսկ յետոյ ստիպում են, որ տանք նրանց անպատուելու համար: Մենք չենք կարող դիմանալ դրան, չենք կարող տանել այլ ևս այս դրութիւնը: Ես ունէի տասներկու սեփական ձիեր, երբ ես ուզում էի տանել նրանց Էրզրում և այնտեղ վաճառել՝ բռնի կերպով խլեցին ինձանից իմ ձիերը: Վերջապէս

քիչ հայեր կան գիտութիւնով, արհեստներով պարապող, որ պետական ծառայութիւնն էլ նրանց քիչ է գրաւում: Այլասերութեան ապացոյց չէ՞ միթէ, որ հայերը խորշում են ամուսնական կապերից ռուս ցեղի հետ... Եթէ կասկածելու լինէք այդ բոլոր պատմածների ճշդութեան մասին—իմացէք, որ նիւթը մատակարարել է Նախկին մի ցէնզօր, ուրեմն մի անձնաւորութիւն, որին անկարելի է անպայման հաւատ չընծայել:

Արդ, գիտէք, ինչպէս են անուանում այդ նախկին ցէնզօրի ազնիւ Камскій-ի և «Новое Время» լրագրի դերը—մեր լեզուն աղքատ է յարմար ոճերով, այդ պատճառով գործածենք ֆրանսիական մի ոճ՝—agent provocateur!

ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ

—

Ամսիս 11-ին, երկուշաբթի, Թիֆլիս նահանգի ազնուականութեան նախաձեռնութեամբ՝ Կրծանիսում պէտք է կատարվի հոգեհանգիստ ի յիշատակ այն զինուորների, որոնք ընկան, 1795 թ. սեպտեմբերի 11-ին, Կրծանիսում տեղի ունեցած ճակատամարտի մէջ:

Ցայտնի է, որ պարսից Աղա-Մահմադ Շահ Ներքինին, 1795 թվի սեպտեմբերի 10-ին, մօտեցաւ Թիֆլիսին 70,000 զօրքով և երդվեց բնաջինջ անել Թիֆլիսը և Վրաստանը այն պատճառով, որ վրաց Հերակլ II թագաւորը չը կամեցաւ թողնել ռուսաց հովանաւորութիւնը և ընդունել Շահի գերիշխանութիւնը իր երկրի վրա:

Հերակլ թագաւորը, որին խոստացել էին ամեն կողմից օգնել, բայց ոչ ոք խոստումը չը կատարեց, ստիպված եղաւ 7000 զօրքով դուրս գալ խրոխտ թշնամու դէմ: Աղա-Մահմադ Շահի անգթութիւնը և դաժան բնաւորութիւնը հանրահռչակ էր. գթութիւն անկարելի էր նրանից սպասել: Ի հարկէ, նա բնաջինջ արաւ Հերակլու սակաւաթիւ զօրքը, գրաւեց Թիֆլիսը և մի սարսափելի կոտորած տեղի ունեցաւ Թիֆլիսում: Թիֆլիսը գրեթէ հիմնայատակվեց: Հազարաւոր աղջիկներ, տղաներ, կանայք գերի տարվեցան Պարսկաստան և լցվեցին հարէմները, կրօնափոխ լինելով:

Այդ կռիւը, որի ժամանակ Հերակլը, ոմանց կարծիքով, փախուստ տուաւ, իսկ ոմանց կարծիքով քաջութեամբ պաշտպանեց հայրենիքը և միայն ստոր դաւաճանութեան զոհ դարձաւ, տեղի ունեցաւ Կրծանիսում 1795 թ. սեպտեմբերի 11-ին, ուրեմն ճիշդ 100 տարի սրանից առաջ:

Վրաց ազնուականութիւնը մտադիր է մի մեհարձան կանգնեցնել Կրծանիսում հայրենիքի պաշտպան զինուորների յիշատակին:

Հոգեհանգիստը կը կատարվի առաւօտեան ժամը 9-ին, յունաց ս. Նիկողայոս եկեղեցում:

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Սեպտեմբերի 1-ին

Այստեղի եկեղեցական խորհուրդը կարծես թէ մի փոքր սթափվել է և կենդանութեան նշոյլը արդէն սկսում է նշմարվել: Այս քանի օրերս խորհուրդը վճռել է այստեղ հայոց եկեղեցական-ծխական դպրոց բանալու հարցը:

Խորհուրդը իր մտածութեան առարկայ է դարձրել նաև եկեղեցու երգեցիկ խումբը կազմակերպելու կամ, աւելի ճիշդ, վերակազմելու հարցը: Պէտք է ասել, որ այժմ եղած խումբը, թէև պարտաւոր է քառաձայն երգել, բայց, դժբաղդաբար, երգում է բազմաձայն, մի խօսքով մի այնպիսի խառնիճաղանճ բան է դուրս գալիս, որ չատ անգամ ստիպում է եկեղեցուց դուրս փախչել: Խմբին յատկացրված է մի պատկառելի գումար, ամսական 250 ր. դրանով կարելի է ունենալ մի լաւ բէգէնտ և առնուազն 3 սոլիստ, իսկ միւսների թիւը կարելի է էժան գնով ցանկացողներից մեծացնել, և ունենալ մի բէգէնտ, որը իմանար նախ՝ հայերէն խօսել, (չը զարմանաք, որովհետև մեր այժմվայ բէգէնտը հայերէն չը գիտէ և «տէր ողորմեայի» տեղ ասում է «թէր ոխորմեա»), ապա հմուտ լինէր հայոց եկեղեցու արարողութիւններին և կարող լինէր խմբի պատրաստութիւնը աջողութեամբ առաջ տանելու:

Չենք կարող չարձանագրել մի տխուր փաստ. յայտնի է, որ մայրաքաղաքների եկեղեցիները կառավարվում են կառավարութիւնից հաստատված հրահանգով և կանոններով: Այդ հրահանգի մէջ ի միջի այլոց (Обязательства совѣтовъ § 1) ասված է հետեւեալը. «Вспомоществованіе бѣднымъ учащимся армянамъ, разнымъ армянскимъ благотворительнымъ и учебнымъ учрежденіямъ» և այլն: Իսկ հայերէն թարգմանված է այսպէս. «Օժանդակել հայազգի խեղճ ուսանողներին, զանազան հայ բարեգործական և կրթական հաստատութեանց» և այլն: Սրանից պարզ է, թէ ժողովի պարտականութիւններից մինն է նաև օգնել ուսում առնողներին: Բայց, դժբաղդաբար, ժողովը խորհրդարանական է դնում արքունական և հայ դպրոցների աւարտածների մէջ. նա օգնում է արքունական դպրոցն աւարտածներին, իսկ հայոց դպրոցներից աւարտածներին՝ ոչ, և պատճառաբանում է թէ՝ իրաւունք չունի: Չը գիտենք որտեղից դուրս եկաւ թէ իրաւունք չունի: Մենք արդէն առաջ բերեցինք այն կէտը, որ վերաբերում է այդ խնդրին, և այդտեղ ոչ մի արգելարիթ պատճառ չը կայ: Հրահանգը դա է, դրանով պէտք է առաջնորդվել և ոչ թէ երևակայութեամբ իրաւունքներ ստեղծել: Հրահանգի մէջ չէ ասված, թէ խորհուրդը իրաւունք չունի արտասահման ուղարկել մէկին ուսանելու համար. չէ ասված, թէ Պետերբուրգից դուրս նա չէ կարող օժանդակել, մինչդեռ ժողովը չէ վստահանում, պատահած դէպքում, օգնել, և միշտ, ազատվելու համար, ամենայարմար միջոցը համարում է՝ մերժել:

Հրաւիրում ենք այդ երևոյթի վրա ժողովի ուշադրութիւնը: Այս անգամ մենք մատնանիշ չենք անում դէպքերը, բայց եթէ հարկ լինի, մենք ուրախութեամբ մէջ կը բերենք փաստեր:

Նիկ. Սաթ.

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

—

Սեպտեմբերի 1-ին

Օգոստոս ամսին Ղուբայում տեղի ունեցան մի չարք ներկայացումներ: Նախ՝ այդ ամսի 14-ին հայոց դպրոցի աշակերտները և աշակերտուհիները խաղացին Սունդուկեանցի «Պէպօ» կոմէդիան և «Խէչօի թուզը»: Այդ գործին նախաձեռնողը օրիորդ Մ. Մարտիրոսեանցն էր: Խաղացողները, ճշմարիտ է, բարեխղճաբար էին պատրաստել դերերը, բայց ծիծաղելի էին փոքրահասակ աշակերտները և գլխաւորապէս աշակերտուհիները, 7—9 տարեկան, վրաց «թասակրաւի» հագուստի մէջ (Կէկէլի, Շուշանի և Էփէմիայի դերերում). նրանք լիլիպուտների էին նմանում...

Իսկ օգոստոսի 17-ին և 21-ին նոյն դահլիճում խաղացին Թիֆլիսից եկած դերասանուհի տիկին Զաբէլ և Պարոն-Սարգսեան: Առաջին անգամը տուին «Անբախտ սէր», իսկ երկրորդ անգամը՝—«Այ քեզ օյին», «Կըռթ-կըռթ» և «Տիկինը նրան սպասում է», վերջումն էլ դիվերտիսէմէնտ, որի ժամանակ տիկին Զաբէլ բանաստեղծութիւններ կարդաց Գամառ-Քաթիպայից: Խաղացողները մի քանի անգամ բեմ կանչվեցան, իսկ տիկին Զաբէլ մի սիրողից ստացաւ փոքրիկ ընծայ: Միւս խաղացողներից աչքի էին ընկնում՝ Սալամբէգեան և Գ. Մէլիք-Դադայեան: Առաջին ներկայացման ժամանակ դահլիճը լի էր: Ներկայացումներին նպաստեց տիկին Ս. Մ. Լալայեան:

Հաշտարար դատաւոր Մ. Ն. Անդրէերսկին նոյն պաշտօնով տեղափոխվեց Բագու: Ի պատիւ նրա՝ Ղուբայի հասարակութիւնը, օգոստոսի 18-ին, մի ճաշկերոյթ տուեց: Անդրէերսկին մօտ 10 տարի է ինչ ծառայում է այստեղ, և թէ իբրև քննիչ, թէ իբրև դատաւոր գրաւել էր բոլորի յարգանքն ու համակրութիւնը:

Եկող տարի Նիժնի-Նովգորոդի համառուսական ցուցահանդէսին ներկայացնելու համար, գաւառապետ Եաղիկովի կարգադրութեամբ, այստեղ լուսանկար պատկերներ հանեցին տասն հին չինված տների, դրսից ու ներսից, և մի բաղանիքից:

Մ. Ս.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, օգոստոսի 26-ին

«Մշակի» 97-րդ համարում կարդացի Ախալցխայից «Քաղաքացի» ստորագրութեամբ մի նամակ, որով պարոնը, իբրև քաջարի քաղաքացի, թագտեան տեղից՝ քննադատում-վճռահատում է Ախալցխայի ծխական դպրոցների վիճակը և իր կողմից բարելաւելու միջոցներ է առաջարկում:

Ինչպէս պատասխան նամակի մի քանի աչքի ընկնող մասերի, խնդարհաբար խնդրում եմ «Մշակի» խմբագրութիւնից թոյլ տալ ինձ մերձակայ համարներից մէկի միջոցով յայտնել ընթերցող հասարակութեանը՝ 1) Որ տղայոց դպրոցի աւագ-ուսուցիչ Ալէքսանդր Սիմէօնեանցի հացէին ուղղածները չատ ու չատ հեռու են պաշտօնական վկայութիւններից: Նա, 1875 թվից, գրեթէ անընդհատ, վարում է ուսուցչական պաշտօն մեր դպրոցներում. նա եղել է ուսուցիչ Ալէքսանդրօպոլ, Երևան, Էջմիածին, Թիֆլիս. ոչ մի տեղից արձակված չէ, Ախալցխայում արժանացել է ազգիս ծայրագոյն հոգեւոր իշխանապետի՝ Վեհափառ Կաթողիկոսի օրհնութեանը, շնորհակալութեանը և պարգևատրութեանը: 2) Որ տարածութեամբ իրարից անջատ, իւրաքանչիւրը 9—11 ուսուցիչ-ուսուցչուհի, 350-ից 400 աշակերտ-աշակերտուհի ունեցող դպրոցներին ես բնաւ օգտաւէտ չեմ գտնում մի՝ թեկուզ համալսանաւարտ՝ աւագ-ուսուցիչ կարգելը—ուր թէ այդ հակառակ է և կանոններին: 3) Գալով «Քաղաքացու» այն խօսքերին թէ՝ «նախկին աւագ-ուսուցիչների, տեսուչների ժամանակ յայտնի եղած որպէս անընդունակ ուսուցիչները դարձեալ շարունակելու են, իսկ Բագրատ Մատթէոսեանի նման արժանաւոր ուսուցիչ և խմբի օգտակար անդամը հեռացրած է... Այդ տխուր երևոյթի դէմ նոյն դպրոցի հոգաբարձու Ալէքսանդր Այվազեան բողոքել էր թեմական տեսչին» կասեմ՝ նախ՝ չատ կասկածելի է, որ հէնց «Քաղաքացու» գոված, և իրօք գովելի, նախկին տեսուչները՝ պ.պ. Գալուստ Տէր-Մկրտչեան, Ստ. Մալխասեան, Աբիս. Յովհաննիսեան ճանաչէին մի ուսուցչի անընդունակ և պահէին դպրոցում: Երկրորդ՝ իմ ժամանակով աւագ-ուսուցչի կողմից իրանց պաշտօնին անյարմար վկայվածները՝ հեռացված են իրանց պաշտօնից (2 հոգի): Երրորդ՝ «Քաղաքացու» գոված ուսուցիչ Բագրատ Մատթէոսեան այս տարի է պաշտօնի մտել. ուրեմն այդ ուսուցչի լաւութեամբ դպրոցը պիտի օգտված լինի և ոչ յետ գնացած, և երրորդ՝ թող համբերութիւն ունենայ մի փոքր՝ չատ չար ու բարի տեսած «Քաղաքացին», թերևս նոր նշանակված ուսուցիչները առաւել արդիւնաւորներն են լինում: Չորրորդ՝ սասնաջրի մէջ ընկնեն, երբ այդ փամփուշտները կը պայթեն:

Այս բոլորի և հաղարաւոր համանման պատմութիւնների ճշմարտութիւնը այլ ես ոչ մի կասկածի ենթակայ չէ: Ես կրկին և կրկին անգամ ստուգել եմ նրանց: Ամեն մի օտար պաշտօնական ներկայացուցիչ արել է մի և նոյնը:

Նախկին ազատամիտ կառավարութիւնը ընդունում էր և սաստիկ պաշտպանում էր այն կարծիքը, թէ խոհեմութիւնը պահանջում է ծածկել այդ իրողութիւնները հասարակութիւնից՝ չը գրգռելու Անգլիայի զայրոյթը և զուր յոյսեր չը զարթեցնելու Հայաստանում: Բայց այդ տեսակ վարմունքի հետևանքը այն պիտի լինէր, որ պէտք է աւելորդ համարվէր յարուցանել հայկական հարցը, մինչև անգամ Սասունի կոտորածից յետոյ: Լորդ Սոլսբիւրին կատարելապէս իրաւացի էր, երբ յայտնեց, որ եթէ պետութիւնները մըտադիր չեն դիմել ոյժի՝ յօգուտ Հայաստանի սկսած շարժումը աւելի վնաս կը բերի, քան օգուտ:

Եւ եթէ արդէն մէջ բերած փաստերը—իսկ Հայաստանի արդի պատմութիւնը ամբողջովին դրանցից է կազմված—չեն կարող դրդել պետութիւններին ներգործական կերպով միջամըտել՝ այլ ես ոչինչ չի օգնի: Եթէ կարելի լինէր կասկածի ենթարկել այս դէպքերի ճշդութիւնը՝ դարձեալ մի՝ թէև թոյլ, հիմք կը լինէր յետ քաշված մնալու համար: Սակայն դրանք միանգամայն ճիշդ են:

Ց. Ք.

երեք քիւրդ եկան և իջևանեցին ինձ մօտ, և ես պէտք է զանազան կերակուրներ դնէի նրանց առաջը առատութեամբ: Երբ որ նրանք կերան և խմեցին իրանց կամեցածի չափ՝ ստիպեցին ինձ բերել իմ կնոջը, և հերթով բռնաբարեցին նրան: Ի՞նչ կարող էի անել ես: Ես անկարող էի դիմադրելու: Ոչ ոք չէ օգնում ինձ կամ մերոնց: Նոյն իսկ Աստուած խուլ է դէպի իմ խնդիրները: Միթէ զարմանալի է, որ ես թողեցի հայրենիքս»:

Այս սիստեմի չնորհիւ, որը ոչ մի կապ չունի լոկ վատ կառավարութեան հետ, ամբողջ գիւղեր փոխում են իրանց բնակիչներին երեք կամ չորս ամսվայ միջոցում. ընդարձակ գաւառներ դատարկվում են հայերից մի քանի տարվայ ընթացքում: Խաչը ամենուրեք տեղ է տալիս կիսալուսնուն. ճանապարհներում աչքի են ընկնում պատառոտած դաղթականների խմբեր. գերեզմանատները լցվում են թարմ գերեզմաններով: Ամբողջ Ալաշկերտը դատարկվել է իր քրիստոնեայ աղգաբնակութիւնից, որին ընդունել է հիւրասէր Ռուսաստանը. Խնուսի գաւառում նոյն պրոցէսը արագութեամբ առաջ է գնում, և հայերը ցաւալի վախճանը գտնում են կամ Կովկասում, կամ գերեզմանատանը: Գիւղեր, որոնք ոչ մի մահմէտական բնակիչ չունէին երեք տարի առաջ՝ այսօր չունեն ոչ մի քրիստոնեայ բնակիչ. և անցնելով որ և է թիւրք կամ քրդական գիւղով՝ դուք զարմանքով նկատում էք մի լաւ պահպանված եկեղեցի փողոցի վրա, և խաչեր՝ գերեզմանատան մէջ—դեռ նոր անցեալից մնացած միակ վկաներ...

Շատերը այս գիւղերից գրաւված են յարձակմամբ, կարծես թէ պատերազմի ժամանակ. քիւրդ հեծելազօրքը մտել է, սպանել է բնակիչներից մի քանիսներին, մնացածներին դուրս է քշել և տիրացել է նրանց տներին և դոյքերին: Այսպիսով Սիմօ, Խիթի, Մշինգերտ, Լակբուդաղ և ուրիշ գիւղեր, որոնք մօտ անցեալում քրիստոնեայ և հայաբնակ էին, այժմ բացառապէս և զուտ մահմէտական են, ինչպէս Մէկկա քաղաքը: Ցանկալի են արդեօք այս տեսակ այլակերպութիւններ՝ դա կարող է լինել մի բաց խնդիր. ոմանք կարող են դերադասել մահմէտական «ջենտլմէններին» քրիստոնեայ հելօտներից, բայց անկասկած է, որ ջերմ համակրութեան ամենաբուռն արտայայտութիւնը միայն չնչին մխիթարութիւն է հայերի համար, որոնք միշտ աչքի առաջ ունեն քրդական հրացանների ծուխը, թիւրքերի դաշոյնի փայլը, իրանց տների մոխիրը և իրանց մերձաւորների արիւնը:

Ասում են, անգլիական ժողովուրդը անսահման հաւատ ունի փողի ոյժի վրա, և նիւթական օգնութիւնից մեծ բաներ է սպասում: Դա մի ծանր սխալ է: Կրէզոսը և Ֆօրտունատը, միասին վերցրած՝ ոչինչ չեն կարող անել Թուրքիայի հայերի համար, մինչև որ բնաջինջ անելու ամբողջ սիստեմը չը փոխվի: Նրանք կարող են, ի հարկէ, գնել հայկական գաւառները, բայց քրիստոնեաների վիճակը կը մնայ նոյնպէս թշուառ, ինչպէս և առաջ: Մի իրական դէպք կարող է լուսաբանել իրերի դրութիւնը: Ասիական Թիւրքիայում դեռ ևս մնացած փոքրաթիւ հարուստ հայերից մէկը ապրում է Բիթլիսում: Այս մարդը, սաստիկ վնասված լինելով, որ իր հայրենակիցները արագութեամբ ոչնչանում են վայրենի քիւրդերի և լիրբ թիւրքերի ձեռքով, վճռեց փորձել փողի ոյժը և գնեց ամբողջ Սիմօ գիւղը: Դա մի բարի գործ էր, մի ազնիւ զոհաբերութիւն: Նա մտադիր էր նորից բնակեցնել այդտեղ հայերին, որոնց թարմ և ճշմարիտ իրաւունքները անվիճելի էին: Դրա համար նա վճարեց փողը և գիւղը իր սեփականութիւնը դարձաւ: Բայց քրիստոնեաների այդտեղ հաստատվելուց մի քանի օր առաջ, մահմէտական չերքէզները ոյժով գրաւեցին գիւղը և նստեցին այնտեղ: Դիմեցին տաճկական օրէնքին, բայց նոյնքան նպատակայարմար կը լինէր դիմել Սատուրնի կամ Մարսի օրէնքներին: Բիթլիսի այս բարեգործի անունը Մկրտիչ աղա Նազարեան է, և հետևանքը, որին նա հասաւ այն էր, որ նրան ստիպեցին վճարել կանոնաւոր կերպով հարկեր, այն ինչ հողը պատկանում է մահմէտական աւազակներին: Եւ թիւրքաց կառավարութիւնը զարմանում է Եւրոպայի զայրոյթի վրա, իսկ սուլթանը զայրանում իր հայ հպատակների ապերախտութեան վրա:

Թէ զայրոյթը և թէ համակրութիւնը աւելի քան անօգուտ են, եթէ նրանք ոչ մի հետևանքի չեն յանգում: Սոխակներին առակներով չեն կերակրում. թիւրքերին և քրդերին էլ չէ կարելի վախեցնել միայն հսկայական միտինգներում (monster meeting) ընդունված որոշումներով:

Անգլիական հասարակական կարծիքը արդէն չափազանց շատ յուսափամփուշտներ է արձակել. մեծ անգթութիւն կը լինէր էլ աւելի մեծացնել դրանց ծաւալը, աչքի առաջ ունենալով, որ խիստ տանջված հայերը պէտք է աւելի դառն

հոգաբարձու Այվազեան իր գիտողութիւնները, իր բողոքը յայտնել էր ոչ թէ թեմական տեսչին, այլ հոգաբարձական ժողովին, աւագ-ուսուցչի տարեկան հաշիւը, զեկուցումը կարդացվելուց յետոյ և հոգաբարձական ժողովը՝ պ. Այվազեանի գրածները լսելուց յետոյ՝ որոշել էր մնացած $3^1/_2$ ձայնով՝ «ճանաչել և ընդունել պ. Ա. Սիմէօնեանցի գրածներն իր բոլոր մասերով իրաւացի և ճշմարիտ»: Սոյն վճռին տուի և իմ հաւանութիւնը:

Թեմական տեսուչ՝ Մեսրոպ քահ. Մելեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Բէլի-Կիւչ, օգոստոսի 20-ին

Աղբուլաղի ս. Կարապետեան տղայոց միդասեան դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը Մոսկվայում ապրող այն օրիորդներին և երիտասարդներին, որոնց նուիրած գրադարանի շնորհիւ այսօր Աղբուլաղի մատաղ սերունդը և հայ հասարակութիւնը կարող են գոհացումն տալ իրանց ընթերցասիրութեան ծարաւին:

Հոգաբարձուներ՝ Սարգիս քահանայ Տէր-Գրիգորեանց, Աստուածատուր Բայրամեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» այսօրվայ համարը բաղկացած է մէկ ու կէս թերթից:

—

Սեպտեմբերի 7-ից, Բաթումից, տեղական ռուս լրագիրներին հեռագրում են. «Պետերբուրգ» շոգենաւով Թագաժառանգ Ցէսարեվիչը Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչի և նրա ամուսնու՝ Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնայի հետ միասին, սվիտայով, այսօր, $5^1/_2$ ժամին ժամանեց Բաթում: Թագաժառանգ Ցէսարեվիչին դիմաւորեցին Քութայիսի նահանգապետը, իշխանութիւնները և քաղաքագլուխը: Մեծ Իշխանուհուն քաղաքի կողմից մատուցվեց մի փունջ: Գնացքը ճանապարհ ընկաւ առաւօտեան 9 ժամին դէպի Բորժոմ: Օգոստափառ ճանապարհորդներին կայարաններում դիմաւորում էր ազգաբնակութիւնը: Գնացքը հասնելու է Բորժոմ $6^1/_2$ ժամին երեկոյեան»:

—

Շատ ուրախ ենք, որ օգնութեան կարօտ տիկին Էսթեր Ֆիցջերալդի նամակը արձագանք գըտաւ, և մենք արդէն ստացանք 105 ռուբլի՝ տիկնոջ հասցնելու համար: Մեզ անչափ հաճելի կը լինէր, եթէ անհետացած Ֆիցջերալդի կնոջ օգնողները յատկապէս հայ կանայք լինէին: Կնոջը թող կանայք ձեռք մեկնեն: Եթէ հայ կանայք զգում են, որ իրանց պարտքն է այդ՝ թող հոգան այդ մասին:

—

Ցիշեցնում ենք հասարակութեան, որ վաղը, օգոստոսի 10-ից, սկսվում են հայոց ներկայացումները վրաց ազնուականների թատրոնում: Պէտք է խաղան «Ղարաբաղի Աստղագէտը» նոր պիէսը:

—

Թիֆլիսի կոնսիստորիան մի ծիծաղելի սովորութիւն է արել,—ամեն անգամ, երբ նրան դիմում է որ և է աղքատ, որ և է հայաստանցի պանդուխտ, կամ մեցի սովեալ, իսկոյն, առանց երկար մտածելու, ցույց է տալիս «Մշակի» խմբագրատան դուռը: Երբ մեր խմբագրատուն սովեալներ ուղարկողը մի որ և է արհեստաւոր, որ և է վաճառական կամ մասնաւոր մարդ է, այդ մենք հասկանում ենք. բայց երբ Թիֆլիսի կոնսիստորիան է այդ անում, որը, իբրև հիմնարկութիւն, պարտաւոր է իրան դիմողներին օգնել, կարեկցել,—այդ արդէն ցույց է տալիս, որ այդ «հովիւները» բոլորովին իրանց պարտքը չեն համարում օգնել խեղճերին և սովեալներին: Բանը այնտեղ է հասնում, որ նոյն իսկ պանդուխտ քահանաներին մեր խմբագրատունն են ուղարկում: Երեկլի բարերարներ...

—

Պետերբուրգից «Нов. Обозрѣніе» լրագրին հեռագրում են, որ վճռված է ներկայ տարվայ ընթացքում պետական բանկի բաժիններ բանալ Քութայիսում, Կարսում, Ելիսաւետպոլում, Թէմիր-Խան-Շուրայում, Նովոչէրկասկում և Սիմֆէրոպոլում:

—

Պետերբուրգից հեռագրում են, որ «Օրէնքների ժողովածուի» մէջ յայտարարված է, որ կրճատած քաղաքային վարչութիւն է մտցնվում՝ Թելաւում, Սղնախում, Դուշէթում, Ախալքալաքում, Ղուբայում, Լենքօրանում, Շամախում, Նոր-Բայազէտում, Նախիջեւանում, Օրդուբաթում, Նուխում, Օզուրգէթում, Սուրբ Խաչում և Դէրբէնդում:

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Ամսիս 3-ին, առաւօտեան ժամը 7-ին, տեղացի մի հարուստ մահմեդական-վրացու եղբայրը, որ օսմանեան ոստիկանութեան պաշտօնեայ է և հիւր է եկած եղբօր որդու մօտ, ոտքից մինչև գլուխ զինաւորված՝ ուժով մտնում է վաճառական Ե. Շահնազարովի տուն և պահանջում է, որ յետ տայ իր եղբօր որդուն այն գետինը, որ աճուրդով, դատարանում, գնել է Շահնազարովը, սպառնալով, հակառակ դիպուածում, կոտորել բոլոր երեխաներին և կնոջը: Շահնազարովի ընտանիքի աղաղակի վրա փողոցից վրա են հասնում մարդիկ և մի կերպ հեռացնում յանդուգն մահմեդականին: Շահնազարովը դիմեց ուր հարկն է և գործը հասաւ տեղիս կոմենդանտի կարգադրութեան:»

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻ դաւառի Քէչիչքեանդ գիւղից մեզ գրում են. «Լսելով տիկին Մարիամ Մէլիք-Աղամալեանցի մահուան բօթը, Քէչիչքեանդ գիւղի ամբողջ հայ հասարակութիւնը հոգեհանգիստ կատարել տուեց օգոստոսի 19-ին, Աստուածածնի տօնին: Ծխատէր Գրիգոր քահանայ Միրզայեանցը քարող խօսելով՝ առաջարկեց հասարակութեանը հանգանակութիւն անել կարօտեալների օգտին՝ ի յիշատակ վաղամեռիկ տիկին Մարիամ Մէլիք-Աղամալեանցի:»

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Գանձակի քաղաքացի երբեմն Յովհաննէս, այժմ Մկրտիչ քահանայ Աստուածատուրեանցը, իր խնդիրքի համաձայն, քահանայ է ձեռնադրվել Շամախու թեմի Միանսար գիւղի համար: Դա մի խարդախ միջոց է, որին դիմել է քահանան՝ իր նպատակին հասնելու համար: Ձեռնադրվելուց յետոյ չէ էլ մտածել իր տեղը գնալու մասին և ամեն տեսակ միջոցների է դիմել, որ Գանձակ քաղաքի մէջ մնայ: Ինչպէս լսում ենք, այժմ սինոդին խնդիրք է ուղարկել Գանձակում մնալու համար, իսկ սինոդը նրա խնդիրքը ուղարկել է Թիֆլիսի թեմի առաջնորդի տնօրէնութեանը: Մենք սպասում ենք, որ Թիֆլիսի առաջնորդը այդ հարցին լուրջ վերաբերվելով՝ կը ստիպի քահանային իր ուխտը կատարել և իր տեղը գնալ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 29 օգոստոսի

Մուչից ստացած նոր նամակները կը հաղորդեն հետեւեալ փաստերը հարկահանների գործունէութեան մասին:

Իքէնճի Խոլի միւդիրի և ոստիկան հարիւրապետ Բէշիդ էֆէնդիի Աւրան գիւղ գործածներէն ստացուած են հետեւեալները. Յովհաննէս քահանայն անգթօրէն գանակոծուեր և բանտարկուեր է: Հազրիեան Աղէկ և Բարսեղ եղբարց, Տուտեան Գրիգորի պարանոցներէն ոստիկանք կապ անցունելով և փողոցներու մէջէն քաշկռտելով ջուրի վրա տարեր և ստիպեր են չան նման ջուրը լափել ու լակել. ասով ալ չը բաւականանալով գանակոծեր և չարչարեր են: Աւրան գիւղացիներէն ուրիշ չատերը, իբր 35 անձինք, հիւանդանալու աստիճան գանակոծուեր և խիստ նախատուեր ու չարչարուեր են:

Գիշերվայ ժամ 4-ի միջոցները հինգ ոստիկանք, Փիլօեան Կուլօ անունով կնոջ տան դուռը կոտրելով՝ ներս խուժեր և կինը մերկանդամ անկողնոյ միջէն հանելով՝ ծաղրեր, վրան պաղ ջուր լեցուցեր, ծեծեր և խեղճի ամանները ջարդեր են. նմանապէս Լուռօ, Նըրկօ և Ադօ անուն կանանց տուներն ևս կոխելով՝ զանազան ծեծեր, հայհոյեր և խեցեղէն անօթները կոտրեր են:

Եաղուպ անուն ոստիկան մը և ընկերք կը մտնեն Արծերթ գիւղացի Հաֆսօ, Մարիամ, Խուդօ, Հերքօ և Աղրութ անուն կնիկներու տանց մէջ, ջարդ ու փչուր կընեն անոնց խեցեղէնները, կը հայհոյեն և կը գանահարեն. Աղրութի որդին կրած սարսափէն մահամերձ հիւանդ է:

Պակօ պէկ և Սայիդ էֆէնդին, 15 ոստիկաններով, յուլիսի 22-ին, Գրօնք գիւղը գնացեր են. սովորական գեշութիւններէ ետքը, գիւղի երեւելիներէն և իրենց տուրքը պատրաստ վճարող Մանուկեան Մխօի թոռը և զաւակնի կոթով Յակոբեան Պետիկի ծնօտին զարկելով՝ երկու ատամները կոտրեր են:

Յուլիսի 21-ին Սուլուխ գիւղը գնացող ոստիկաններէն Խալամ և Մամէն, մանաւորապէս Մարտիրոս անունով 83-ամեայ ծերուկ մը, զուարճութեան համար, փայտի և աքացիի հարուածներով կը տանջեն, գետին կը տրորեն, վեր վերցնելով՝ գետին կը զարնեն և չատ մը չարչարանքներ կուտան: Գիւղացիք և Մամէի եղբայր Բասուլ միջնորդելով և աղաչելով հազիւ հազ կը յաջողին մարած վիճակի մէջ այդ վայրենիներու ձեռքէն ազատել խեղճուկ ծերունին, որու աջ ոտքի ծունկը կոտրեր և մէջքն ևս ծանրապէս վտանգուեր է: Այժմ ծերունին անկողնոյ մէջ չարաչար կը տառապի և ազատուելն երկբայելի է:

Հարկահան ոստիկանք ախուցի Մարիամ անուն կնոջ մը 4 լիտր իւղը վաթսուն ղրուշ փոխարէն քաշեր բերեր են (մինչ մէկ լիտր 60 ղրուշ կարժէ) և նրա աղաչանաց և արտասուաց փոխարէն լաւ ծեծ մը տուեր են:

Ոչ միայն գիւղերու, այլ նաև քաղաքին մէջ ալ սաստիկ հարկահանութիւն տեղի կունենայ, հոս ևս ծեծ, հայհոյանք և բանտարկութիւնք պակաս չեն: Յուլիս 21-ին, բոլորովին աղքատ և հացի կարօտ հայերէն 35 անձինք բանտարկուեցան կենտրոնական բանտին մէջ, իբրև մահապարտներ... 91 աւուր բանտարկութեան վճռով, զոր օրէնքը միայն անոնց համար կը տրամադրէ, որոց կարողութեան տէր ըլլալն կը հաստատուի և ընդդիմանալով տուրք չեն տար. այս բանտարկելոց մէջէն էր բաղէշցի Պետրոսեան Յովհաննէս անուն անձն ալ, որ փոքր ի չատէ բարեկեցիկ վիճակ մը ունենալով՝ իւր տուրքը կանխաւ վճարած էր ամբողջովին, սակայն յիսնապետ Խալիլ էֆէնդին ակնջ չը կախեր նորա յայտարարութեան, և հայհոյելէ ու սուրի պատեանով զայն ծեծելէ զկնի, կը յանձէ Շուբրի և Մուսօ անուն ոստիկանաց, որք թէ ճանապարհին և թէ բանտին մէջ փոխն ի փոխ չարաչար կը գանակոծեն և հուսկ ուրեմն թաղի մուխթարն իմանալով՝ արձակել կուտայ:

—

Կարծես թէ այս տարի թիւրքերու և քիւրդերու ականջը երբէք լուր մը չէ հասած. ամեն ոք ըստ առաջնոյն իր ուզածն ընել կը նայի: Գիւղերու տասանորդները վաճառուեցան. միւլթէզիմները (վարձակալք) բոլոր կատաղի թիւրքեր և քիւրդեր են: Անցեալ տարիներու կերպով սկսած են գիւղացիներու վրա բռնութիւնները ի գործ դնել, ամեն բան երկրագործին հետ հաւասար կիսել է մտքերնին և անչուշտ այս տարի ալ կը յաջողին, եթէ բան մը չը լինի: Գիւղացիներն ամբողջ Մուշ քաղաքը լեցուած են բողոքելու, բայց ոչ փաշան այստեղ է և ոչ անգլիական հիւպատոսը, ուրիշ լսող ալ չը կայ. գիւղացիներէն չատերը լեռը գնացին բողոքելու, ուր կը գտնուին միւթեսարիֆը և հիւպատոսը: Ամեն մէկ գիւղի մէջ 5—10 ժանդարմ կայ՝ ղրաւ թահսիլ ընելու (գանձելու): Խեղճ գիւղացւոց վրա երբէք կարողութիւն չէ մնացեր, ուտելիք ալ չունեն: Ժանդարմներ սոսկալի չարչարանքներ կուտան և գիւղացիք օրուան պարէնը, մէկ հատիկ կաթ տուող կովը և լուծքի կենդանիները ձեռքէն խլելով՝ ոչինչ գներով վաճառել կուտան, և ի վերայ այսր ամենայնի, չնորհիւ վեհափառ սուլթանի, անդորրութիւնը կատարեալ է:

Տարօնոյ վանքերէն միայն վանահայրը հետեւեալը կը գրէ:

«Վանքի շրջակայ գիւղացի ժողովուրդը այնչափ աղքատացած է քրդաց հարստահարութիւններէն, որոց ծանրութենէն և հարկահանաց բռնութիւններէն ու զեղծումներէն, այն աստիճան նեղուած է, որ կը խորհի, առանց այլ ևս սպասելու, թող տալով տունն ու տեղը, ցանուած արտերը և այգիները՝ գաղթել այլուր, արտասահման: Ժողովրդեան գաղթելէն վերջ ինձ ևս անհնարին է մնալ աստ, ևս ալ ժողովրդեան պիտի հետեւեմ, ուստի կը խնդրեմ ըսէք սրբազան պատրիարք հօր, թէ որու պէտք է յանձնել վանքն և վանքի գոյքերը»: Պանդխտութիւնը Հերովդէս մէ, որ մեր սերունդի վրա կը կատարէ ամեն տարի Բեթլեհեմի մանկանց կոտորածը. Հերովդէս սրով կոտորեց, իսկ պանդխտութիւնը հազարաւորներու ծնունդը կը խափանէ. միջոցները տարբեր են, հետեւանքը նոյն է: Հարկ է ըսել, թէ ինչ է մեր հայ ժողովրդեան պանդխտութեան պատճառը. վերի գրուածները բաւական չեն բացատրեր:

Դ. Սմբատեան

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

—

Բոստոն, օգոստոսի-25

Թերևս իմացած էք, որ Նիւ-Եորքի մէջ մի քանի նշանաւոր անձերէ բաղկացեալ մանաւոր մը կազմուեր է՝ հանգանակութիւն կատարելու ի նպաստ Սամոյ տարաբախտ բնակչաց:

Մի քանի օրէ ի վեր Boston Transkript-ն ալ հանգանակութիւն բացած է. հանգանակելի գումարը «Անկլօ-Արմէնիյէն» ընկերութեան ձեռամբ իր նպատակին պիտի գործածուի: Ցիշեալ թերթին նայելով անակնկալ տեղերէ կարևոր գումարներ կը ստացուին, որով յուսալի է թէ պատկառելի գումար մը պիտի կրնայ հանգանակուիլ:

«The Congregationalist» անուն չաբաթաթերթը մի խիստ յօդուած հրատարակեց, որ կը պնդէ թէ թիւրք կառավարութիւնը պէտք է չուտով ջնջել աշխարհի երեսէն: Խօսելով հայոց տառապանաց մասին՝ կը յաւելու: «Անոնց որ կուզեն իրենց Հայաստանի ընկերներուն օգնել, միայն մէկ կերպ կայ, այն է ձայն բարձրացնել և իրենց բովանդակ աղդեցութիւնը գործածել անընդհատ՝ Թիւրքիոյ իսպառ ջնջման համար:»

Այս նոյն չաբաթաթերթն է, որ երկու տարի առաջ գովեստով հրատարակեց Համլինի տխրահռչակ յօդուածը, որով ծերունի միսիոնարը, հակառակ իր դաւանած քրիստոնէական սկզբանց, սոսկալի յարձակում կը գործէր հայ հայրենասէրներու, յեղափոխականներու դէմ, որոց հրթիռ, մարդասպան, դաւաճան և այլն ածականները կը շռայլէր անխնայ:

Դիլլօնի յօդուածը չատ մեծ տպաւորութիւն գործեց այստեղ: Ամերիկեան կարևոր ամսաթերթ մը զայն «The Contemporary Review»-ի այդ թուոյն ամենէն կարևոր յօդուածը և նոյն ատեն հայկական խնդրոյ վրայ գրուած ամենէն հմտալից գրութիւնը կը համարի: «Տէյլի Թէլէկրաֆի» հռչակաւոր թղթակցին այս աշխատութիւնը իրականապէս այլոց գովեստին և մեր երախտագիտութեան արժանի է: Այդ յօդուածին հատուկտորներն հրատարակեցին ամերիկեան չատ թերթեր, մանաւանդ Կլասգոյի յանձնարարութեան վրայ, որը յօդուածին իսկական արժէքը կրկնապատկեց:

Արմէն

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 սեպտեմբերի: Սեպտեմբերի 5-ին Թագաժառանգ Ցէսարեվիչը Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչի և Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնայի հետ միասին ժամանեցին Օդէսա, որտեղից չոգենաւով ճանապարհ ընկան Բաթում: Սեպտեմբերի 5-ին Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչ ժամանեց Վարշավա: Սեպտեմբերի 4-ին Մեծ Իշխան Պետր Նիկոլաեվիչ իր ընտանիքով ժամանեց Գուրզուֆ (Կրիմ):

«Нов. Время» լրագրում տպված է հեռագիր Հեռամից այդ լրագրի աշխատակցի՝ պապի մօտ ընդունվելու մասին: Խօսակցութեան մէջ, որ տեւեց 40 րոպէ, պապը խօսում էր եկեղեցիների միութեան, սոցիալիզմի, լեհացիների մասին: Լեհացիները,—ասեց պապը,—պարտաւոր են զանազանել քաղաքականութիւնը կրօնից: «Нов. Время» լրագրի աշխատակցին ընդունեց և կարդինալ Բամպոլլա:

ՊԱՐԻԶ, 6 սեպտեմբերի: Հանրապետութեան նախագահը հրաւիրեց կոնտրէկսեվիլ եկած Իշխան Լոբանով-Ռոստովսկուն ներկայ լինել զօրախաղին Միրկուրում, որով և աւարտվում են մեծ զօրախաղերը: Իշխանն ընդունեց հրաւէրը և Միրկուր կերթայ մինիստր Անոտոի հետ միասին:

Կ. ՊՕԼԻՍ, 7 սեպտեմբերի: Վերջին օրերս Ղալաթիայում խօլերայից հիւանդացան 11, մեռան 7 հոգի:

ՀՕՆԿՕՆԳ, 7 սեպտեմբերի: Կուշէնգում գլխատեցին 7 տեղացիներին, որոնք քրիստոնեաների կոտորածի գլխաւոր դրդիչներ էին:

Խմբագիր և հրատարակիչ՝
ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

տեղափոխվել է Գոլովինսկի պրոսպեկտ, № 28, տուն Ադամեանի։

Երեխաների, ներքին և կոկորդի հիւանդութիւններ. երեկոյեան 5—7 ժամը։

(№ 103) 1—10

ՀԱՇԻՒ

ԵԱԼՏԱՅԻ «ՀՈԳԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ»

Համաձայն Նոր-Նախիջևանի և Բէսարաբիայի հայոց կօնսիստորիայի № 2110 գրութեան, իմ ծառայութիւնս լրացրած լինելով, ահա ներկայացնում եմ երեք տարվայ հաշիւը.

1892 թւի սեպտեմբերի 1-ին, ժապաւինեալ մատեանով ինձ յանձնել են՝ 1,785 ր. 60 կ.։ Երեք տարվայ ընթացքում ժողովել եմ յօգուտ ընկերութեան՝ 1,070 ր. 39 կ.։ Բանկի տոկոսը՝ 144 ր. 62 կ.։—Գումարն է՝ 3,000 ր. 61 կ.։

Բարեգործական նպատակներով արած ծախսերն են՝ 334 ր. 17 կ. Եալտայի «Փոխադարձ վարկի բանկում», № 359 գրքոյկով, ընկերութեան նախագահի անունով ունենք կանխիկ դրամ՝ 2.363 ր.։ Այսօր յանձնում եմ ընկերութեանը՝ 303 ր. 44 կ.։—Գումարն է՝ 3,000 ր. 61 կոպ.։

Եալտայի «Հոգատար ընկերութիւնը» շնորհակալութիւն է յայտնում Պետերբուրգի տէր-Գրիգոր Տէր-Գրիգորեանցին, նրա հանգանակած 165 բուբլու համար, որ ստացվել է։

Ընկերութեան գործավար՝ Իվան Լազարեանց

1—1

ՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ

որ աւարտել է հաշուապահութիւն, որոնում մի որ և է յարմարաւոր պաշտօն։

Հասցէն՝ Իշխան Նիկողայոս Արղութեանի մօտ, Աբասաբադսկայա հրապարակ № 2, Բարսեղեանցին։ (№ 102) 2—3

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Կիրակի, սեպտեմբերի 10-ին, 1895, մասնակցութեամբ Լ. Ֆ. Ֆէրարիգի, Ն. Դ. Կովալենկու, Մ. Լ. Պրէտանի, Ն. Ն. Մակարովի և Դուժայի կը կայանայ

ԿՕՆՑԷՐՏ

Տոմակները վաղօրօք կարելի է ստանալ Սուզանաճեանի և Լանկօի երաժշտական մագազինները և Ծատուրովի լամպային մագազինում, իսկ կօնցէրտի օրը՝ թատրօնի կասսայում.

Սկիզբն է $8^1/_2$ ժամին։

Պատասխանատու—կառավարիչ՝ Արսկի։

(№ 101) 3—3

ՑԵՆԶ ՈՒՆԵՑՈՂ

Մի երիտասարդ, որ վարել է մի քանի տարի գաւառական քաղաքներում ուսուցչի պաշտօն, ցանկանում է դասեր ունենալ։ Գիտէ և հայկական ձայնագրութիւն։

Հասցէն՝ Михаилъ Сергѣевичу Шарбабчеву, Тифлисъ, Темныя ряды, собствен. д. № 2.

(№ 97) 5—5

Մի քանի տարի պաշտօն վարած **ՑԵՆԶԱՒՈՐ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ** ցանկանում է տեղ ունենալ հայոց դպրոցներում։ Պայմաններով դիմել՝ *Ахалцыхъ.* Учителю Григоряну, до востребованія. (№ 101) 2—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀՈՒՍ—10 հատը 50 կ.

ԵԱՆԿՕ ԵՐԱՖԻՇՏԸ—10 „ 20 կ.

Դիմել կարելի է՝ Տէր-Միքայէլեանցին Тифлисъ, Большая Кривая № 3.

(№ 89) 3—6

Հարկաւոր է ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ օրիորդաց դպրոցի համար մի ցէնզով ՎԱՐԺՈՒՀԻ կամ ՈՒՍՈՒՑԻՉ։ Պայմանների մասին դիմել «Մուրճի» խմբագրատուն։

(№ 101) 2—3

Մ. ՄՈՒՐՏԱԳ

Շարունակում է ԱՆԳԼԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ դասեր տալ. երաշխաւորում է կանոնաւոր արտասանութիւն։ Հասցէն՝ Լաբօրատօրնայա, № 4, բաղի մէջ։ (№ 101) 2—3

ԲԺՇԿԱՊԵՏ ԱԻԵՏԻՔ ԲԱԲԱՑԱՆԻԵ

բացակայութեան պատճառով

Նրա

ԶՐԱ-ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ԲՈՒԺԱՐԱՆՈՒՄ

(Սօլօլակ, Սերգիեվսկի փողոց, № 14)

Ամառվայ ընթացքում հիւանդներին կընդունի

ԲԺՇԿԱՊԵՏ

ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀՊԱՐՈՆԵԱՆՑ

կանանց և ջղային հիւանդութիւնների

Ամեն օր, 1—2 ժ. ցերեկվայ և 7 ժամ երեկոյեան

Բուժարանում, բացի էլէքտրական վանաներից, դուշերից, բժշկական մարմնամարզութիւնից—կին հիւանդների մասաժ, որի համար ընդունելութեան ժամերին սերկայ են լինում կին և տղամարդ մասաժիստներ.—մասսաժիստ ԽՈՍՐՕՎԵԱՆՑ և կին մասսաժիստ ԿՐԱԵՎՍԿԱՑԱ։

(№ 71) 17—30

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ-ՇՂԵՐԲԻՆԻՆԱ—10—11 ժ. կանանց և ներքին հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուչարթի, չորեքչաբթի և ուրբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեք. հինգշ. և շաբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—$7^1/_2$ ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համաձայնվելի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

ՐՕՍՏՕՎԻ ՄԷՋ

բացվել է ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ և ԳՐԱՏՈՒՆ։ Ընդունվում են գրքեր, օրացոյցեր և պատկերներ՝ ծախելու համար։ Հասցէն՝ РОСТОВЪ (на Дону) ГАЗЕТНОЕ АГЕНТСТВО.

(№ 100) (յ.) 2—15

ՕՐԲԱԶԱՐԻ հայոց ծխական ուսումնարանի համար հարկաւոր են երկու ուսուցիչ՝ մինը ձայնաւոր։ Տարեկան վարձ 500 և 400 ր.։

Մեր հասցէն. Армянскъ Базаръ, Тав. губ., Попечит. Армяно-Базарск. армянскаго приходск. училища. (№ 83) 8—10

ԱԶԴ

ԴԶԼԱՐԻ շրջանում գտնվող Դարաջալիլ գիւղի միդասեան դպրոցի համար հարկաւոր է ՑԵՆԶ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ և ՄԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ, տարեկան ռօճիկ երկուսին միասել՝ վեց հարիւր բուբլի, բնակարան։ Ծառայ և վառելափայտ։

Գործակալ եկեղեցեաց՝

Ալէքսիանոս քահ. Աստուածատուրեանց

Դզլար (№ 94) 5—6

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՏՆԱՅԻՆ ՎԱՐԺՈՒՀԻ

լաւ իմացող հայոց և ռուսաց լեզուները, 6 և 7 տարեկան երեխաների համար՝ ԲԱԳԻՈՒՄ։ Ցանկացողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէով՝ БАКУ, Амбарцуму Меликову. (№ 100) 2—6

Սրանով յայտնում եմ ի գիտութիւն հայ հասարակութեան, որ ներկայ սեպտեմբերի 1-ից ընդունվում են ԶՐԿԻՆԵԱՆՑ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ միդասեան ծխական ուսումնարանում նաև ԱՂՋԻԿՆԵՐ։ Ցանկացողները կարող են դիմել ինձ՝ ներկայացնելով ծննդեան և ծաղկի վկայականները խնդրագրով։

Նախագահ հոգաբարձութեան՝

Ներսէս աւագ քհն. Տէր-Բարսեղեանց

(№ 100) 2—2

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՑ

Երկաթուղու կարիքների համար պահանջվում է պատրաստել փայտեղէն նիւթեր և հասցնել այդ նիւթերը 1896 թւին, այն է՝

1) Կաղնու չպալներ գլխաւոր գծի համար—120,000 հատ.
2) Նոյնը եղենափայտի, կարագաչի և թեղուչի—435,000.
3) Նոյնը կաղնու՝ Զիատուրեան ճիւղի համար—40,000.
4) Կաղինների և եղենափայտի աղիւսաձև տաշեղներ—400 կուպլէկա.
5) Նոյնը Զիատուրի ճիւղի համար—40
6) Աղիւսաձև տաշեղներ սալայատակների, եղենափայտից—4280 հատ
7) Զանազան աղիւսաձև տաշեղներ, եղենափայտից—10,000
8) Տախտակներ եղենափայտի տեսակներից—80,000 կուբ. ֆ.
9) Նոյնը կաղնու—4000
10) Եղենափայտի գերաններ— 150,000»
11) Փոչտաներ—1000 հատ
12) Գերաններ կաղնուց —60,000 կուբ. ֆ.
13) Տիլեայ և լատենի ծառերի գերաններ (կարելի է փոխարինել դրանց աղիւսաձև տաշեղներով և տախտակներով)—95,000 կուբ. ֆ.
14) Հեռագրական վերադիրներ կաղնու փայտից—1000 հատ
15) Զանազան տեսակի փայտ—2500 կուբ. ֆ.

Այն անձինք, որոնք ցանկանում են հայթայթել այդ փայտեղէն նիւթերը, հրաւիրվում են տալու իրանց յայտարարութիւնները Երկաթուղու Վարչութեանը (Թիֆլիս, 9, սեփական) փայտերի համար՝ հոկտեմբերի 12-ին, չինութեան փայտի համար՝ հոկտեմբերի 18-ին և չպալների, փոխադրվող և սալայատակային փայտեղէն տաշեղների համար՝ հոկտեմբերի 20-ին սոյն տարվայ, ուշ ցերեկվայ 12 ժամից, և մտցնել միաժամանակ Երկաթուղու Վարչութեան կասսան գրաւական՝ թղթադրամներով կամ պետական արժէթղթերով այն գնահատութեամբ, որ հաստատել է Ֆինանսների Մինիստրը, առաջարկվող կապալի գումարի 10%-ի չափով։ Յայտարարութեան հետ պէտք է կցված լինի Վարչութեան կասսայի անդորրագիրը՝ գրաւական տալու մասին, կամ թէ պօստային անդորրագիրը՝ երկաթուղու վարչութեանը պօստով գրաւական ուղարկելու մասին։

Կապալի պայմանները և նիւթերի ցուցակը կարելի է ստանալ Մատերեալնայա Պլուժբայի գրասենեակում ամեն օր, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ, բացի տօն օրերից։ Օտարաքաղաքացիք, ժամանակ չտալու համար, պահանջում են պայմանները հեռագրով (Тифлисъ, Закавказская, Матеріальная)։

Երկաթուղու Վարչութեան Ընդհանուր Ատեանի որոշումը պէտք է հաստատվի պետական երկաթուղիների Վարչութիւնից։

(№ 103) 1—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՁՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նադօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղ. Ծովիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

(ե. շ.) № 62 14—25

ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ս. ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

Սօլօլակ, Սադովայա փ. № 46 (Սերգիեվսկայա փողոցի դիմաց)

Մանուկների ընդունելութիւնը (երկու սեռի) սկսվել է օգոստոսի 22-ից, իսկ ուսումը—սեպտեմբերի 1-ից։ (№ 93) 6—6

ԳՈՐԾԱՐԱՆ

Գ. ԵՒ Վ. ՄԱՐԳԱՐԵԱՆՆԵՐԻ

Տեսպլիէ բեադի, Ալէքսանդրօվսկայա լինիա, № 107—108

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ.

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ՄԵՏԱՔԻՍԷ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

Սադա և ծաղկաւոր մախմուր, պլիւշ, լենտ-գօտիկ, ճակատանոց, գլխի աղլուխ, բարձի երես, պլիւշի գորգ, և այլն։

ՊԱՀԵՍՏ ԹԻՖԼԻՍՈՒՄ. Գանօվսկայա, № 31, Յ. Գ. Մարգարեանի մօտ։

(№ 79) 6—10

ԿԱԿԱՕ ԲԼՕԿԷՐ

ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻԶՔ (գլխաւոր պահեստը Ռուսաստանի համար „ԵԱՎԱ“ ֆիրմայի մէջ. (С.-Петербургъ, Большая Морская, 38).

Ծախվում է կօլոնիալ և դեղային ապրանքների բոլոր լաւ մագազիններում $^1/_1$, $^1/_2$, $^1/_4$ և $^1/_8$ կիլոգրամանոց թիթեղեայ տուփերի մէջ։

(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անտվերպէնի համաշխարհային ցուցահանդիսում 1894 թւին։ (№ 151) 46—50

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

Կիրակի, սեպտեմբերի 10-ին, վրաց ազնվականների թատրոնում կը կայանայ Թիֆլիսի հայ դերասանական ընկերութեան առաջին ներկայացումը: Կը խաղացվի «ԳԱՐԱԲԱԴԻ ԱՍՏՂԱԴԷՍԸ», որ բեմին յարմարեցրել են պ.պ. Սարգարեան և Վրայր:

Խումբը կը տայ մօտ երեսուն ներկայացումներ: Բէպերտուարը բաղկացած է թէ ինքնուրոյն և թէ թարգմանական ընտիր պիէսաներից, որ ընտրվում են առանձին կազմված մանաժողովի նախաձեռնութեամբ:

Խումբը կազմված է հետևեալ անձինքներից. տ. տ. Մէլիքեան, Զարէյ, Փառանձեմ, Օր. օր. Վարդիթեր, Մարի-Հրանույշ, Ախաչեան, Վարդուհի, պ. պ. Արէլեան, Տէր-Դաւթեան, Վրայր, Արեւշատեան, Յարութիւնեան, Աւետեան, Աղայեան, Պարոն-Սարգսեան, Ստեփանեան, Մամիկոնեան, Մէհրաբեան, Բաբուրեան, Անդրանիկ և այլք...

Աբոնիմենտ վերցնողներին 20% զիջումն: Տեղերի գինը պակասեցրած է: Աբոնիմենտ տոմսակներ ցանկացողները, ինչպէս և խմբի հետ որ և է գործ ունեցողները պէտք է դիմեն դերասանական ընկերութեան գրասենեակը, վրաց ազնվականների (նախկին Արծրունու) դպրէրյա, № 12:

2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է տրակտիրների, զուխանների, բուֆէտների, հիւրանոցների, ռէստորանների և կաֆէ-ռէստորանների, տաք կերակուր և խմիչքներ ունեցող գարեջրատների, կահաւորված սենեակների, սրճարանների, նախաճաշիկ կամ տաք կերակուր ծախող թէյատների, չաքարեղէնի կամ կարկանդակի վաճառատների՝ տեղն ու տեղը զանազան մթերքներ սպառելու իրաւունքով, ուտելեղէն ծախող խանութների և իջևանատեղերի տէրերին, որ Տրակտիրային արհեստին վերաբերեալ կանոնադրութեան 35, 42 և 43 յօդուածների զօրութեամբ, Բարձրագոյն հաստատված 1893 թ-ի յունիսի 8-ին, տրակտիրային տուրքի դասաւորելը ամեն հիմնարկութեան վրա պէտք է վերջնականապէս կատարվի ոչ ուշ հոկտեմբերի 20-ից և եթէ այդ դասաւորումն պատրաստ չի լինի այս հոկտեմբերի 20-ին, այդ ժամանակ դա կը կատարի քաղաքային վարչութիւնը: Այդ պատճառով Քաղաքային Վարչութիւնը խնդրում է վերոյիշեալ հիմնարկութիւնների տէրերին՝ չսպասել և թոյլատրական վկայականներ առնել տրակտիրային արհեստով պարապելու 1896 թ-ի համար, որպէս զի հնարաւոր լինի իր ժամանակ ընտրել դասաւորող յանձնաժողովը: (№ 102) 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով տեղեկացնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ 1895 թ-ի սեպտեմբերի 2-ից քաղաքային տուրքը հաւաքողները վերայի կամուրջի վրա, կամուրջով անցնելու համար վճար ստանալու ժամանակ կը տան առանձին տոմսակներ, որոնք կը պահանջվեն կամուրջի միւս ծայրին: Քաղաքային վարչութիւնը, տուրքերի աւելի լաւ կոնտրոլ անելու և տարաձայնութիւնների առաջն առնելու համար, խնդարհաբար խնդրում է կամուրջով անցնողներից պահել այդ տոմսակները և տալ կամուրջի տուրք ժողովողին՝ կամուրջի միւս ծայրում: (№ 100) 3—3

ՕՐԲԵԼԵԱՆՑԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ

ՀԻՄՆՎԱԾ 1844 ԹԻՆ

(Թիֆլիս, Աբաս-Աբադսկայա հրապարակ, № 11)

Աշակերտները ընդունվում են իբրև պանսիոներ, կիսապանսիոներ և երթեկ ու պատրաստվում են բոլոր միջնակարգ ուսումնարանների համար:

Ընդունելութեան հարցաքննութիւնները սկսվել են օգոստոսի 22-ին, իսկ ուսումը սկսվել է սեպտեմբերի 1-ից: (№ 96) 4—4

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՄՈՒՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետեսութեան:

Բ) Առևտրական թուաբանութիւն.

Գ) Առևտրական նամակագրութիւն.

Դ) Գեղագրութիւն և ամենավաղ ձեռքերի ուղղութիւն:

Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 4 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ Ֆրէյլինեան փողոց, տուն Սուլթանովի, № 13:

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիդզէկելի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ:

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու:

(№ 86) (հ. չ.) 9—15

ԱԶՈՎ-ԴՈՆԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿ

ԿՕՄԻՍԻՕՆԵՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

ԳՆՈՒՄ Է և ծախում է կառավարութեան կողմից ապահովված տոկոսաբեր թղթեր և կալուածական բանկերի գրաւական թղթեր:

ԾԱԽՈՒՄ Է խաղարկութեան տոմսակներ բոլոր երեք փոխառութեան:

ՏԱԼԻՍ Է փոխառութիւններ որոշեալ ժամանակամիջոցներով և յատուկ ընթացիկ հաշուով, ապահոված արժէթղթերի գրաւականով բօրսային գնի 90%-ի չափով և ոչ-ապահովեալները՝ առանձին գնահատութեամբ, իսկ խաղարկութեան տոմսակների համար տալիս է հետևեալ չափով

ՌՈՒԲԼ 215 I փոխառութեան համար
„ 200 II „ „
„ 180 ազնուական բանկի փոխառութեան համար

ՎԵՐՑՆՈՒՄ Է

Ապահոված տոկոսաբեր արժէթղթերի համար, փոխառութիւն տալու ժամանակ 6%
Ոչ-ապահոված „ „ „ „ „ „ 6½%
Յատուկ հաշիւներով „ „ „ „ „ 6½%

Խաղարկութեան տոմսակները կարելի է ձեռք բերել

ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԳՐԱՒ ԴՆԵԼՈՎ ՆՐԱՆՑ ԲԱՆԿՈՒՄ:

Մաս մաս վճարումները, փոխառութիւնը հանդցնելու համար, ընդունվում են յետաձգումներով, գրաւ տուողների ցանկութեամբ, ՏԱՍԸ ՐՈՒԲԼՈՒՑ սկսած ամեն անգամ:

(№ 94) 3—5

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

(Վէլիամինովսկայա փող. № 3)

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

Սկսվել է օգոստոսի 23-ից (9 ժամից մինչ 1 ժամ կէսօրից յետոյ և 6 ժամից մինչև 8 ժամ երեկոյեան): Մանուկները ընդունվում են նախապատրաստական բաժանմունքներում (հայոց և վրաց), կրտսեր, միջին և աւագ: Աւագ բաժանման մէջ վերջնականապէս պատրաստվում են մտնելու համար բոլոր միջնակարգ դպրոցների ստորին դասատները:

Պարապմունքները սկսվել են սեպտեմբերի 1-ից:

(№ 87) (5, 21, 23, 28 և 30 օգ.) 4—5

ԿՐԱԿԻ ԴԷՄ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ապահովագրում է ամեն տեսակ շինութիւններ Թիֆլիս քաղաքի մէջ

ՏԵԼԵՖՈՆ № 288

Վարչութիւնը գտնվում է քաղաքային տանը, Երևանեան հրապարակի վրա, և բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 2½-ը կէս օրից յետոյ:

Մուտքը Վէլիամինովսկայա փողոցից, քաղաքային դումայի պօդէզդով:

(№ 90) (հ.) 3—20

ԿԷՕԼԷՐԵԱՆ Z-ԱՆՈՒՇԱՀՈՏ ՕԾԱՆԵԼԻՔ

Ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ. ԲՈԼՈՐ նշանաւոր առևտրականների մօտ

Ինչպէս Z տառը վերջինն է այբենարանում, այնպէս էլ կարելի է ասել, որ այդ օծանելիքը ներկայացնում է պարֆիւմէօրային արուեստի վերջին խօսքը:

Կէօլէրեան Z—անուշահոտ օծանելիքը, չը նայելով իր ամբողջ քնքշութեանը, շատ խտացած է և այդ պատճառով նրա ախորժելի հոտը զարգանում է կամաց-կամաց գործածվելուց յետոյ և ապա մնում է մի քանի օր: (№ 88) 2—2

Պատիւ ունեմ յայտնել ի գիտութիւն պատուելի հասարակութեան և իմ պ.պ. պաքատուներին, որ այս տարվայ օգոստոսի 1-ից իմ կօշկակարային արհեստանոցդարձնում եմ գործարան, ուր կընդունվեն ամեն տեսակ պատուէրներ և ուր կը լինի սեփական գործարանի մէջ կարած կօշիկների մեծ ընտրութիւն: Պատուէրները թէ տեղական, և թէ ուրիշ քաղաքներից՝ շուտ և լաւ:

Թէ պատուիրված և թէ պատրաստի կօշիկների գները շատ չափաւոր են: Բոլոր աշխատանքները կը կատարվեն ձեռ. Վլադիմիր Զօրբինաձէի ղեկավարութեամբ և իմ անձնական հսկողութեան ներքոյ:

Խնդրում եմ յարգելի հասարակութեանը ուշադրութիւն դարձնել գործի գեղեցկութեան և կօշիկի թեթևութեան վրա:

5—5 (№ 78) Ցարդանքով Ա. ՏԷՐ-ՋԱԽԱՐՈՎ

ՕԾԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՂՋԿԵՐԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ է 23,000,000 ռուբլի:
Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում:

Ծնողներին, խնամատարներին և առհասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, „ՐՕՍՍԻԱ“ ընկերութիւնը առաջարկում է ՕԾԻՏԻ (բաժինք) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամեայ աղջկայ համար ապահովացնել 5000 ՐՈՒԲԼԻ ՕԾԻՏ, այնպէս որ, 18 ՏԱՐԵԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ստանան այդ գումարը, (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը „Ռօսսիա“ ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամսից յետոյ 52 ռուբլի:

Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձվին բոլոր իր վճարած տուրքերը (պրէմիաները,) եթէ միայն ապահովագրված երեխան վախճանվի պայմանաւորեալ ժամանակից առաջ:

1895 թ-ի յունվարի 1-ին „ՐՕՍՍԻԱ“ ընկերութեան մէջ ապահովագրված էին 31,701 անձինք 83,708,760 ռուբլի դրամագլխով:

Տղայ երեխաների համար ևս կարելի է ապահովացնել դրամագլուխ նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ դրամագլուխը կը ստացվի իբրև թոշակ (պենսիա) ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ համար, եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժամանակամիջոցը:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), կովկասեան շրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ, որ գտնվում է՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիևսկայա փ. տ. № 6. (երկրորդ յարկում) և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում:

(№ 71) (հ.) 5—52

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Сентября 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.